




Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԼՁԳԵՅԻՆ, ԲԵՆԵՍԻՐԵԿԸՆ, ԳԲԵԳԻՏԵԿԸՆ
ԵՒ ՔԵՂԸՔԵԿԸՆ


ՎԵՑԵ ԲՈՐԴ ՏԱՐԻ
ՇՐԶԱՆ ՄԻԼՄԵԼՅ



ՅԵՐՈՒՍԵԼԻՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1871



Մ Ի Փ Ն

ՎԵՑԵՐՈՐԻ ՏՄԻ
ԹԻ 1.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր


ՅՈՒՆԻԱՐ 31
1871.

Ա.Զ.Գ.Ս.Յ.Ի.Ն. ԲԱՆՍԱՍԻՐՈՒԿԱՆ ԵՒԶՐԱԳԻՏՕՒԿԱՆ

ՎԵՐԱԿԵՆԴԱՆՈՒԹԻՒՆ

ԿԵԱՆՔԸ խորին խորհուրդ մ'է, զոր միայն ճանաչել կարող ենք և ոչ ստճմանել։ Կենաց յատկութիւն է աւճումն, շարժումն և շարունակութիւն. իսկ կենաց մահն է՝ դադարումն։ Եւ ճանաչողութեամբ է, որ կարող ենք կենդանի էակները որոշել անկենդան էակներէն։ Եւ այդ կեանքը եւս բազմաառասակ է և ամեն կեանք մի և նոյն կեանքը չէ։ Եւ Բոսական կեանքը, այլ է անասական կեանքը և այլ է մարդկային կեանքը։ Եւ այդ միայն մի տեսակ կեանք ունի. անասունը՝ երկու տեսակ, իսկ մարդը՝ քանի մի տեսակ։ Վարդը ունի անասնական կամ մարդնաւոր կեանք, որովհետեւ մարմին ունի, ունի բանական կամ մտաւոր

կեանք, ըստ որում կը խորհի և կը մտածէ, ունի բարոյական կեանք կամ սրտի կեանք, որովհետեւ կը սիրէ։ Եւս երեք տեսակ շարժողութիւնք և փոքրողութիւնքը միայն մարդոյ մէջ միացած կը տեսնուին։ Վարդնայ կենդանութիւնը նիւթական սղնուկն է. մարդի կենդանութիւնը՝ մտածութիւնն է և ճշմարտութիւնը. իսկ սրտի կենդանութիւնն է՝ ճշմարիտ սէրը։ Վարմինը կը մեռնի՝ երբ նիւթական սնունդը կը քայքայուի. միտքը կը մեռնի՝ երբ տգիտութեան և մարդութեան մէջ կ'ընկղմի. իսկ սիրտը կը մեռնի՝ երբ ետական ինքնասիրութիւնը և առեղծութիւնը կը տիրեն։ Եւ այդ որովհետեւ մարդը բանական



և բարոյական էակ լինելով հանդերձ կենդանի մարդ է, ուրեմն մեռած են այն մարդիկ որոնք չ'են խորհիր, ուրմք չ'են սիրեր, որոնք մոլորութեան մէջ են և որոնք կ'ատեն : Այս ճշմարտութիւնը ինչպէս անհասանելու համար է, նոյնպէս և ամբողջ ազգերու :

Քառի երբոր ներկայ դարուս ճրջ մարիտ և կենդանի յառաջագնացները վերափոխանութիւն կ'աղաղակեն, իրենց բուն նպատակն է մարդոյ մտաւոր և բարոյական կենդանութիւնը, և այս կենդանական շունչը փչողը, այս միտաւորացէս և բարոյացէս մեռածներու յարուցիչ ձայնն ու զօրութիւնը ճշմարիտ գաստիարակութիւնն է : Եթէ գաստիարակութիւնը միակողմանի է, եթէ մտաւոր կեանքը բարոյականէն կը զատէ, երբէք կարող չ'է ամբողջ մարդը վերակենդանացընել : Այսն զի մարդը ամբողջացէս վերակենդանացնելու համար կարելւոր է նոյն իսկ մարդոյ մէջ գտնուած քանի մի կենաց առաւելութիւնքը նկատողութեան առնուլ և ըստ այնմ գաստիարակել : Այսն զի աշխարհիս մէջ գտնուած կեանքերը իրարու չեն նմանիր և չ'են հաւասարիր : Բուսական կեանքը ստորագոյն է անասնականէն, անասնականը՝ մարդկայինէն, մարմնաւորը՝ մտաւորէն և մտաւորը՝ բարոյականէն : Ամենադարձ և ռամիկ մարդուն անգամ եթէ հարցնելու լինի, աւելի կը փափաքի մտացի լինիլ քան թէ գեղեցիկ, աւելի բարի քան թէ մտացի : Այս մասին կարծեաց տարբերութիւն չը կայ բովանդակ մարդկութեան մէջ : Ախթը և ձէւը միշտ ստորագոյն են գիտութեանէն կամ ճանաչողութեանէն : Իսկ գիտութիւնը երբէք կարող չ'է հաւասարիլ սիրոյն : Ախթը մտքին ծառայելով միայն գին ունի, իսկ գիտու-

թիւնը անարդ է, եթէ չ'է յարեալ 'ի սէր : Տունկը կեանք ունի, բայց չըզգար, որովհետեւ զգալու համար չ'է ստեղծուած : անասունը կեանք ունի, բայց չը խորհիր, որովհետեւ խորհելու համար չ'է ստեղծուած : Իսկ մարդը, որ ստեղծուած է սիրելու համար, մարդը որոյ ճակատագիրը սէրն է, մարդը կարող է զգալ, կարող է խորհիլ, և եթէ չը սիրէր՝ մեռած է : որովհետեւ մարդոյ վերին կեանքը՝ բարոյական կեանքն է և գաստիարակութեան բուն վերնակէտն և և բարոյական կենաց կենդանութիւնն է :

Արդարեւ՝ ճշմարտութիւնը մեծ բան է, բայց մեծ չ'է քան զսէր, և առանց սիրոյ՝ ճշմարտութիւնն անօգուտ է : Աւելի համարձակ տեսնք, առանց սիրոյ՝ ճշմարտութիւն չը կայ, որովհետեւ չը կայ միութիւն, չը կայ երջանկութիւն : Պէտք չ'է զարմանալ այս մասին, վասն զի էականացէս առնելով ճշմարտութիւնը իրողութիւն մ'է և յարաբերութիւն, և ոչ թէ մտաց լոկ հայեցողութիւն կամ գաղափար : Ճշմարտութիւնը գաղափարոց մէջ լինելէն առաջ գործողութեան մէջ է, և խօսքի մէջ լինելէն առաջ՝ իրաց մէջ : Իր մի ճշմարիտ է, երբ այն է՝ ինչ որ է : Խօսք մի ճշմարիտ է, երբ զայն կը բացատրէ, ինչ որ պէտք էր բացատրել : Եթէ մարդը իրօք այն չ'է, ինչ որ պէտք էր լինիլ, ինչ որ պէտք էր առնել, որքան որ ճրջ մարտութիւնը ճանաչէ, գարձեալ կարող չ'է ճշմարտութեան մէջ լինիլ : Այնպէս որ իսկայպէս անհնարին է առնել, թէ այս ինչ մարդը սէր չունի, բայց ճշմարտութիւն ունի, այն ինչ մարդը բարի չ'է, բայց լուսաւոր է : Բարոյական կեանքը միշտ վերագոյն է մտաւոր կեանքէն : Այսն զի սէրը մարդկային կենաց նպատակն է, իսկ

գիտութիւնները՝ նոյն նպատակին հասնելու միջոցները . վասն զի մարդոց նպատակը միութիւնն է, և միութիւնը սէրն է .

Արդ՝ նոքա ամենքը, որոնք ազգային վերակենդանութեան կը փափային, պարտաւոր են մտաւոր եւ բարոյական դաստիարակութիւնը ի բարձէ բնաւ չը զատել, լայր իր ջերմութենէն չը բաժնել և միշտ բարոյականի առաւելութիւնը ծանաչել . Առանց բարոյական տարեր, յորմէ դժբաղդաբար խիստ զուրկ են մեր դպրոցները, մեր քննչականութիւնը, մեր ժողովները, մեր բանախօսութիւնքը, մեր գրութեանները, մեր յարաբերութիւնքը, մեր ազգակցութիւնը և մեր եղբայրութիւնը, անհնարին է ազգային ճշմարիտ վերակենդանութեան ակն ունիլ . Այն կենսարար զօրութիւնը, որ մեր ցրուած, ցամքած ու չորացած կմախքները պիտի միաւորէ, պիտի յողէ և կենդանութիւն ապ, այն զօրութիւնը՝ Դաստիարակութիւնն է . Այն փրկարար հիւժը, որով պիտի վերանորոգին, վերածնին և սնանին մեր միտքն ու սիրտը՝ Ճշմարտութիւնն է եւ սէրը . Այն անցավժեշտ սլոյ, որ պիտի մեր Ազգի անունը անմահ պահէ ազգաց դաստիարակին մէջ, բարոյական և մըտաւոր Վերակենդանութիւնն է .

Սիօնը, այս վերակենդանութեան մխիթարիչ յուսով ոգեւորուած, մուտ կը գործէ ահա 1871 թուականին մէջ և անպայման պարտք կը համարի սոյն վերակենդանութիւնը գլխաւոր նպատակ բռնել իր մտածութեանց և հըրատարակութեանց . վասն զի համոզուած է Սիօնը, որ ազգաց մահուան և կենդանութեան միակ կեդրոնն է ՄԻՏՔԸ և ՄԻՐՏԸ .

Սիօնը, անցած տարուան ջերմ վերակենդանութիւններէն շատ առաջ, արդէն գիտողութեան առած և պարզած է կաթողիկոսական խնդիրը 1869 թուականի Հունիսի ամսատետրին մէջ . Սիօնը, այժմ եւս նոր յօդուած մի քնդանելով նոյն խնդրոյ նկատմամբ, զոր պատմական հետազոտութեամբ շարադրած և զըկած է մեր համազգի բանագէտ Պ. Ա. Այվազեան, կը փութայ հրատարակել ի վերծանութիւն արդարախոհ ազգայնոց .

Տեսութիւն . — Հակաթոռք . — Իրաւապետական անուն կրողք . — Տեղիք կաթողիկոսութեանց . — Արեւիկապիտ . — Լիւթարութիւն . — Լպտէն բնութիւնք .

Ազգ . կաթողիկոսական աթոռոց խնդրոյն վրայ այնքան խօսուեցաւ, և այդ աթոռները այնքան դրին վերուցին, որ հիմա մեծ զգուշութիւն պէտք է ատիկա նորէն ձեռք առնելու, որ չըլլայ թէ բողոքովին քայքայուին .

Սենք կ'ուզեմք նորէն այսխընդրոյն վրայ գալ, բայց ոչ թէ Պիւթագորեանց լաւաւ մեր փաստաբանութեան կայան ընտրելով, ինչպէս շատերը մինչեւ հիմայ ըրած են, այլ այնպիսի փաստեր յառաջ բերելով որ ազգային պատմութեան և Հայաստանեայց եկեղեցւոյ աւանդութեանց նկատմամբ հարազատ ըլլալուն վրայ՝ մեր ընդգիմաբաններն իսկ ըսելիք մը չունենան .

Սոյ և Աթմամարայ կաթողիկոսութեանց մենք հակաթոռ ըսած չեմք, և չպիտի ըսեմք .

Ի՞նչու .

Վասն զի, հակաթոռներու ծնուն

դը՝ պատահական կ'ըլլայ, և ոչ թէ պատմական :

Հոս մեր ընդդիմախօսաց առջեւ թերեւս խնդարու կէտ մը ներկայանայ, որով առարկին թէ՛ պատմական գրեթէ ամեն անցքերու ծնունդը՝ պատահական կամ գիպուածական չէ՛ ինչ է :

Ահա մեր ալ տառնկներուն օձիքէն բռնելու տեղը :

Օհուռնդը՝ անշուշտ մինչեւ ետքը ծնունդ չը մնար : Ասոր մէջ տեղը և և վախճանն ալ պէտք է ըլլայ :

Արդ՝ կը հարցնեմք. փնտռուած օրինաւորութիւնը՝ կաթողիկոսութե՛ ծագմանը վրայ է, թէ անոր տեւողութեան կամ ընթացքին վրայ :

Առաջինին նկատմամբ ըսելիքն արդէն ուրիշ առթով մը ըսած եմք, և մեր հակառակաբանները ասի լաւ կը յիշեն :

Իսկ երկրորդին գալով պիտի փնտռենք հիմայ թէ՛ պատմութիւնը ինչ կերպով մեր աչքին առջեւ կը դնէ այս երկու կաթողիկոսութեանց յարատեւութիւնը մինչև մեր օրերը :

Ինչ կը կարծենք : Ա՛խ թէ Ազգը մինչեւ ցայսօր անտարբեր կեցած է կաթողիկոսական խնդրոյն նկատմամբ,

Աւ եկեղեցւոյն մէջ՝ ամեն Աստուծո կախողին ու եռախաչ կամ գնաւաձեւ գաւազան կրողին, կամ եղիսկոսութեան ձեռնադրութեան ժամանակ՝ արծուէ դրօշմ՝ գորգ գործածողին և ՚ի հանդիսի (Վմա—հոլանի կրողին, և կամ եկեղեցիէն դուրս, հին սովորութեան համեմատ, մատանին մատնաւ մատը դնողներուն, կամ նոր սովորութեան համեմատ, խաչակիր վեղարաւորներուն) միթէ օրինաւոր կաթողիկոս անունը շուայած է :

Ինաւ երբէք :

Ա՛տ գաղափարը՝ ազգին կամ եկե-

ղեցւոյն պատուոյն նախադիմք մը՝ ընել ուղել է, որ մենք երբէք չենք ընդունիր :

Այս ժամանակակից յամառները՝ լաւ և ուղիղ կերպով համոզելու համար, տեսէք ազգային պատմութիւնը ինչ խորհրդաւոր ոճով, ժամանակին արդի տարածայնութիւնները գողցես գուշակելով՝ այս խնդրոյն պարագաներուն վրայ անանկ անաչառ և մանրամասն տեղեկութիւններ աւանդած է մեզ, որով սպիտակը՝ կայրերուն անգամ աչքը խօթած ըլլալու համար, սեւը՝ միշտ անոր քով շօշալիւն կերպով դրած է, որպէս զի՝ եթէ ուրիշ բան մ'ալ չենք գիտեր, գոնէ բաղդատութեամբ և եթէ կարողանամք անշփոթ որոշել, նոյնաթո՛ր հակաթո՛ռ էն, իրականը՝ անուանականէն, աթո՛ռը՝ աթոռակալէն, համակիրը՝ ներհակակիրէն, հարազատը՝ անհարազատէն, նաեւ օրինաւորը՝ ապօրինաւորէն :

Խօսքերնուս դասակարգէն բաւական կը հասկցուի որ, մեր միտքը Ալիլիկայ և Ռշտունեաց կամ Ալթամարայ կաթողիկոսներուն օրինաւորութիւնը հաստատել չէ :

Նոխա՛ արդէն գտրերով նուիրաւ գործուած բան մ'է, ուստի մեզի չէ ինկեր քանի մը թեթեւամիտներու պէս ամեն օր նոր ՚ի նորոյ հաստատելու կամ ջնջելու փոստեր փնտռել այլ մեր ցուցնելը՝ ատենց հակաթոռ չըլլալին պիտի ըլլայ, և այն, ըսինք, պատմական փաստերով :

Կուղենք գիտնալ թէ՛ որո՞նք են բուն իսկ հակաթոռները :

Անոնք միայն, որոց հաստատութիւնը՝ թէ ՚ի սկզբան և թէ մէջտեղը, օտարներու ձեռքով կամ ազգե-

ցումթեամբ կատարուած է, եւ ոչ թէ ազգէն: — Կ'ուզէ ընդհանրապէս եղած ըլլայ, կ'ուզէ մասնաւորապէս, որովհետեւ այս վերջի երկու կերպն ալ համակշիռ օրինաւորութիւն մը կ'ունենան եկեղեցւոյ հեղինակութեամբ, յանուն ազգի կատարուած և ըստ այնմ ընդունուած ըլլալուն համար:

Հակաթու էին ուրեմն, Սուրմակայ, Բրքիշայի, Շմուէի կաթողիկոսութիւնները որոնք ազգէն սիրուած, և անկէ ընտրուած Սահակ հայրապետին կենդանութեան ժամանակը, մինչդեռ այն ընտրեալն Ղաւթուծոյ, մէկ կողմէն ազգին համար կը տապալուէր, միւս կողմանէ ասոնք կաշառքներու կամ ուրիշ գծուած միջոցներով, մանաւանդ օտար թըշնամի Պարսից միջամտութեամբ կը հաստատուէին:

Հակաթու էր նաեւ, Բագարանցի Յովնան երրորդի կաթողիկոսութիւնը, զոր Յոյնք ընտրեցին, Յունաց բաժնի Հայոց համար, և հաշիւ 7—8 ամիս աւելց անոր կաթողիկոսութիւնը:

Հակաթու էր վերջապէս Թէոսկորոս Սանահնի վանահօր կամ Լուսեցւոյն կաթողիկոսութիւնը, որ Պետրոս գետադարձի կենդանութեւն անոր բանտարկութեան միջոցին, խռովութեան և երկպառակութեան թեւերու վրայ յենած՝ այնպէս բաղմեցաւ հայրապետական դաճը:

Հիմա հասկցուեցաւ թէ, որոնք են եղեր իրաւընէ հակաթուները:

Ընդհանրապէս կաթողիկոսներու ալ շարք մը, որ 47 տարուան շրջանի մը մէջ իրարու վրայ տեսնուած են:

Գրիգոր Բ. Սիւրբաբի, Բարսեղ Ա. Լեւեցւոյ, և Գրիգոր Գ. կաթողիկոսութեանց ժամանակ 1066 էն մինչեւ 1113ը, սա հետեւեալներն եւս կաթողիկոս տնտրուող կրած են:

1071. Գէորգ Լուսեցի, ասե՛նադար վկայատիրին ի թաւ բլււր:

1073. Սարգիս ի Հոնի:

1077. Թորոս ալախօսիկ ի Հոնի:

1085. Պօղոս՝ վանահայր Սարազայ ի Սարազ:

1113. Գաւիթ Թոռնիկեան՝ Ա. կաթողիկոս Լըթամարայ:

Երբեք յաջորդութիւնն է, որ մինչեւ ցայսօր կը շարունակուի:

Պատճառ:

Արովհետեւ այս շարունակութիւնը ամեն ժամանակակից ընդգիծութեանց յաջթելով կը հասնի մինչեւ 1441, ուր Կիրակոս Վիրապեցի Վլմիածնական կաթողիկոսը իր նախորդաց օրով եղած նորոգք և ատելութիւնները բառնալով, անոր օրինաւորութիւնը հանդիսապէս կը վերահաստատէ:

Լըթամարայ աթոռոյն ամենյարակից պարագաներուն և պատմական փաստերուն՝ ուղղը կրնայ Սեծութեցւոյն պատմութենէն վերահասու ըլլալ:

Հասկցանք հիմա, որ Լըգին և Կեղեցւոյ սրբածը սրբած կ'ըլլայ եղեր:

Ինչ մ'ալ կաթողիկոսներու օձիքը թողելով՝ ասոնց համար Լթուդրուած տեղերը աչքէ անցնեմք և տեսնեմք թէ, ինչ կապակցութիւն ունեցեր են այդ աթոռները՝ ազգին և եկեղեցւոյն հետ:

Հոս, եթէ պատմական ակնարկ մը նետենք, իսկոյն պիտի համոզուինք որ բուն Հայաստանի մէջ քաղաքա-

կան իշխանութիւն ունեցած ասե՛ն նիս, կաթողիկոսական ասանկ բաժա նու մներ երբեք չեմք ունեցած :

Այդ բաժանու մները անիշխանութեան օրերու մէջ միայն ծնունդ առած պիտի երեւնան :

Այս ըսելով կարծեմք բաւական պարզուած կ'ըլլան կաթողիկոսութե՛ ազգին հետ ունեցած աւելցութեան ներքին պատճառները :

Ի՞նչու երկարաբանեմք :

Այն միտքը՝ ապու շներու դաս տալ չէ, այլ բանագէտ, պատմագէտ և արամաբան ձեւացողներուն՝ պարզապէս խնդիրը, իր մերկութեամբը աչքերնուն առջեւ դնել է :

Արեւմտեան կաթողիկոսութեանց տեղիքը միայն յիշելով անցնիմք սա փափուկ կէտը, այն է՝ ամբողջութեան կամ բաժանման հարկաւորութիւնը, որուն վրայ շատ երեքկտալու դեռ ժամանակը չէ . . . :

Եւ այդ տեղերն են :

Վաղարշապատ, 'Իւրին, Լ՛նի, Օ՛ւսմիդաւ, Օ՛ւլք-Վիլեակ, Հոռմկոյ, Սեւա-Լեւոն, Թաւ-բլուր, Աիս, Լ՛ըթամար, Չորոյ վանք, Վալարազ, Հոնի, Մարաշ, Սուղայ, Լ՛սպահան :

Ասկից յայտ յանդիման կ'երեւայ, որ կաթողիկոսները, երբեք իրենց աթոռները ազգին պիտոյքէն վեր չնախադասելով, միշտ ժողովրդին ետեւէն երթալու ստիպուել և ժամանակին պատմական պարագաները միայն նկատողութեան առնելու հարկադրուել են :

Աւաթի իրաւամբ ըսաւ ()տեան թէ՛ մեր նախնիքը մասնաւոր քաղաքներու չյարեցան այլ անկախութեան :

Իմացանք հիմա աթոռներու տեղափոխութեանց բուն պատճառը :

Ներհակակրններն ալ չմոռնանք : Օր օրինակ :

Սեւքիսեղի, 'Իաւթի Սուղայեցւոյ, Սրապիտնի Ուսայեցւոյ, Սահակայ երկրորդի, Յակոբ Սուղայեցւոյ, Լ՛ըրաղար Լ՛նթապցւոյ, 'Վաղար Սահակեցւոյ, Պետրոս Քիւթաիի, Յովսէփ Լ՛ըղու-թեանցի, 'Իաւթի և 'Իանիէլի պատմական անցքերը՝ որք զիրար դահլնկէց ընելու ջան 'ի գործ դրած են :

'Խաւ անանկ օրեր անցուցած կը տեսնամք ազգը, որ մի և նոյն ժամանակի մէջ Լ՛ըմիածնայ Լ՛թուին վրայ՝ մինչեւ չորս կաթողիկոս մէկէն նստեր են զիրար հրելով, հրմշտկելով :

15 բորդ դարուն մէջ՝ Սարգիս, Որստակէս (Լ՛րիստակէս) Յովհաննէս և Գրիգոր :

16 բորդ դարուն մէջ ալ՝ Լ՛ապրել Թադէոս, 'Իաւթ և Սեւքիսեղ :

Եւ, կաթողիկոսները իրարու հակառակած են պիտի ըսեմք թէ աթոռը՝ աթոռակալներու հետ :

Այս անձնական հակառակութիւնները՝ պիտի կրնամք աթոռին վերագրել :

Եթէ չէ :

Արեւմտեան 'Իաւթ և Սուսաբեկեան հակակաթողիկոս պիտի ըսուէին և ոչ թէ այդ օրինաւոր աթոռները՝ հակաթոռ :

'Բանի՛որ, մինչեւ ցայսօր յարատեւած ըլլալէն զատ, երբեմն Լ՛ըմիածնայ կաթողիկոսաց հետ սերտ մը տերմութիւն և յարաբերութիւն ալ ունեցած են :

Սովորեցանք հիմա աթոռոց և աթոռակալաց հակառակութիւնը՝ իրարու հետ շփոթելէն յառաջ եկած ծակ եղբակացութիւնը :

Ուր թողունք այն մեծ սխալմունքը, որուն մէջ գահալէժ եղած կ'երեւնան ոմանք, խտրութիւնը կամ անխտրութիւնը՝ հարազատութեան կամ անհարազատութեան հետ շփութելով :

Լինխտրութիւնը՝ Հայաստանեայց եկեղեցւոյ ոգւոյն գեղեցիկ յատկութիւններէն մէկն է, և ասոր համար Լճմիածնայ, Լճթամարայ, Սոյ և Գանձասարայ կաթողիկոսութեան ժամանակ թեմական խտրութիւններ երբէք եղած չեն : Ինչպէս հիմա ոմանք ուղեցին ընել և տակաւին ասոր կը ճգնին :

Սինչեւ անգամ մի և նոյն եկեղեցւոյն մէջ, հիմակու հիմա տարբեր եպիսկոպոսութիւն և քիչ մ'ալ երթալով տարբեր վարդապետութիւն և քահանայութիւն ալ յարուցանելու պիտի ելնեն :

Քոռոնց կը յիշեցնեմք որ Լճթամարայ կաթողիկոսները, երբեմն Լճմիածնայ ալ կաթողիկոս եղած են, ինչպէս նաեւ Լճրուսաղեմի և Պօլսոյ պատրիարքները՝ Սոյ կաթողիկոսներ :

Որոց ահա քանի մը օրինակները :

1461 . Լճթամարայ Օլաբարիա կաթողիկոսը՝ Լճմիածնայ կաթողիկոս եղաւ :

1658 . Սեբաստացի Խաչատուր Գ. Կ. Պօլսոյ պատրիարքը՝ յետոյ Սոյ կաթողիկոս եղաւ :

1561 . Կ. Պօլսոյ Տիրատուր Ա. պատրիարքը՝ Սոյ կաթողիկոս եղաւ :

1531 . Կ. Պօլսոյ Լճարիա պատրիարքը՝ Սոյ կաթողիկոս եղաւ :

1692 . Կեսարացի Սատթէոս պատրիարքը՝ Սոյ կաթողիկոս եղաւ :

Եւ որ ամենէն զարմանալին պիտի երեւնայ ոմանց, այն է Սսեցի թէոգորոս անուն վարդապետի մը՝ Լիլիկիոյ կաթողիկոսութեան ընտրուելը :

վը հանդերձ, հայրապետական օժման հանդիսին մայրոքադաքիս Ս. Լստուածածնայ եկեղեցւոյն մէջ կատարուիլը 1784 ին : Ինչպէս նաեւ Լճմիածնայ կաթողիկոսներէն ոմանց ձեռնադրութիւնը՝ նոյնպէս 'ի Կ. Պօլիս :

Տեսանք հիմայ մեր Եկեղեցւոյ անխտրութեան ոգւոյն ըրածներն ու թողածները, որ դեռ իբրեւ հարազատութիւն և անհարազատութիւն ըմբռնած՝ կ'ընդգրկմանանք . . . :

Եւ մնայ հիմայ տղգային արդի երեք կաթողիկոսութեանց օրինաւորութիւնը կամ ապօրինաւորութիւնը՝ քիչ մ'ալ իրենց ընտրական կէտին մէջ փնտռել : Եւ այդ կէտին համար՝ օրինաւոր եղած կ'ըլլայ, երբ ազգովին ըլլայ նէ՝ ըսած եմք, և ապօրինաւոր՝ երբ օտար միջամտութեամբ :

Եւ որ, ինչպէս օրինաւոր պիտի կրնամք համարիլ Սոյ և Լճթամարայ կաթողիկոսութիւնները՝ որոց ընտրութիւնը, ինչպէս քիչ մը վարը պիտի տեսնուի, երբեմն օտարներու միջնորդութեամբ ապօրինաւոր կերպիւ ալ կատարուած է :

Եւ այդ այդ տեսակ ընտրութիւնները միթէ Սոյ և Լճթամարայ մէջ նոր կաթողիկոսութիւն մը հաստատած են, թէ կաթողիկոս մը :

Հոս է մեր ընդգրկմաբանից խնաւիք ծուղակը :

Եւ անոնք՝ քիչ մը վերը հակաթոռներու համար մէջ բերած օրինակներն ուս կրնանք յարացոյց բերել :

Քան լիցի : Եւ ինչէ կաթողիկոսութեան հաստատութիւնը, այլէ կաթողիկոսի մը ընտրութիւնը :

Եթէ այդպէս նկատեմք, յըմիւս
ածնայ կաթողիկոսական արդի ընտ-
րական ոճն ալ ազատ չկրնար սեպուել
այս ապօրինաւորութեան շրջանէն :

Բսելէ որ, օրինաւորութեան սե-
զածը մինչեւ հիմա ոչ այնչափ ընտ-
րողական կերպն եղած է, որչափ ազ-
գէն գտած ընդունելութիւնը :

Իսկ այսուհետեւ, եթէ բան մը
ընել կ'ուզեմք, աւելի աղէկ է որ՝ փո-
խանակ դարաւոր կաթողիկոսութիւն-
ները տեղերնուն վերցնելու, առա-
ւորէն ընտրութեան ձեւը միայն մէջ
տեղէն բարձուի :

Հին ատենը՝ Սոյ կաթողիկոսնե-
րը Վիլիկոյ Վժիրայից և Եդիպտոսի
Սուլթաններու ձեռք կ'ընտրուէին,
և տարուէ տարի երեքական հարիւր
ղը կը խոստանային վճարել, և այս
տուրքին անունը ֆէլէ ահճէֆ կ'ըսէին
(Սամանցիք) :

Ինչպէս և նոր ատեններս Վլթա-
մարայ մէջ իսան (Վահմուտի միջամե-
տութիւնը, և Սոյ մէջ Խոզան) զ-
լուի արարքները յայտնի են ամենուն :

Եթիւսայ կաթողիկոսները ևս, Պար-
սից իսաներունկամ Հահերուն ձեռ-
քով շատ անգամ թող դրաւած են,

Եւն իսկ մայր աթոռոյ կաթողի-
կոսի այժմեան ընտրութեան ձեւը
ըստ մասին տօյրինաւոր է : Վասն զի
որչափ որ մենք կը կարծենք թէ ժո-
ղովուրդը կ'ընտրէ, մեզնայն ժամա-
նակը գիտենք Պալաթիկան, որ ժողո-
վուրդը միայն երկու ընտրելի կը ներ-
կայացնէ, և օտարն է որ այն երկու-
քէն մէկը կ'որոշէ և կը հաստատէ :

Եթէ Վեորդ Վ. կաթողիկոսի
նկատմամբ այս արարողութիւնը չը
կատարուեցաւ, ասոր պատճառն այն
էր որ Տաճկաստանի պատգամաւորը՝
կերպովմը Պալաթիկայի բողոքարկուն էր
ի գիմաց երեսփոխանական ժողովոյն :

Ի՞նչ կը կարծենք, միթէ երկրորդ
ընտրութեան մը ժամանակ Պալաթիկան
երկու ընտրելի չպիտի պահանջէ :

Չայս բսելով կ'ուզենք վճառական
կերպով հաստատել որ բացարձակ ա-
պօրինաւոր ընտրութիւնը օտարնե-
րու ձեռքով կատարուածն է, և ոչ
թէ ազգին :

Սոյ կամ Վլթամարայ կաթողի-
կոսները կարող են երեսփոխանական
ժողովէն ընտրուել՝ առանց ապօրինա-
ւորութեան մէջ քայլ մը առնելու,
վասն զի ընտրողները՝ նոյն եկեղեցւոյ
զաւակներն են, ինչ որ Սեցին և Վլթ-
թամարցին :

Բանի որ ընտրութեան շրջանը՝
եկեղեցւոյ սահմանէն ելած չէ, օ-
տարին ձեռքը չէ անցած, ապօրինա-
ւոր չէ : Բաւական է որ ընտրեալը՝
արժանաւոր ըլլայ, և ժողովոյին բազ-
մաթիւ մասէն վկայուած :

Վնոք որ թեմական ընտրութեան
խնդիրներ յարուցին, գիտութեամբ
թէ անգիտութեամբ նորաստեցին որ
ամենեւին ընտրութիւններ չըլան,
ինչպէս կը տեսնեմք, որ այնչափ ջերմ
վիճարանութիւններէն զինի, տակա-
ւին ընտրութիւն չեղաւ :

Եւ ի՞նչ կարող է երաշխաւորել որ
պիտի ըլլայ :

Ի՞նչու լուած են թեմական ընտ-
րութեանց փաստաբանները և տրա-
մաբանները :

Ի մնացաւ գործը :
Ո՞վ ընտրեց : Ո՞վ վաւերացոյց :
Սեզի համար դեռ բան մը եղած
չունի, և ասանկ երթայ նէ՝ ըլլալէն
ալ լստուած գիտէ . . . :

Ե. Յ. Ալալէան :

ՍՈՒՐԻ ՏԵՂԵՍՅ ԽՆԴԻՐԸ

(Հարունակութիւն, տես թիւ 12)

Հետեւեալ օրը դարձեալ ըստ առաջին աւուր հրաւիրանաց սահմանեալ ժամուն ներկայացաւ սրբազան Պատրիարքն Վսեմ. Վալի փաշային և Սիւնիւֆ էֆէնտին. հոն էր նաեւ Վամասկոսի Վաղղիական Պ. Հիւսպատոսը։ Օկնի սովորական տեսութեանց հարցոց Վսեմ. Սիւնիւֆ էֆէնտին և ըսաւ. «Բաթրիք էֆէնտի. բանի որ այդբան ժամանակ նոյն շնորհքը վեհանձնաբար ըրած էք խաթինաց, և դուք իսկ ըստ ձեր խոստովանութեան՝ ձեր պատրիարքութեան միջոցին վեց տարի ալ սիրով շարունակած էք, (ի բաց առեալ երկու տարի յառաջ Նազիֆ փաշային օրովը պատահած անց բերը,) այդեօք կարելի չէ որ դարձեալ նոյնը շարունակէք բնել, և սիրոյ կապը այդպիսի դժուարութեամբ չխզէք։»

—Արդէն ձեր մեծութեան երեկեան օրը պատմեցի մի ըստ միտքէ, և կործեմ որ գլուխնիդ ալ գաւեցաւ, արդեօք կ'ուզէք որ Պ. Հիւսպատոսին ներկայութեամբը նորէն լռէք։ Վաղղեմ, բանի որ նուաստս գաղղիարէն չեմ գիտեր, դարձեալ ձեր մեծութիւնը պիտի թարգմանէ, ըստ որում ուրիշ մարդ ալ չէք բնդունիր այս դատերուս մէջ, ուստի կ'աղաչեմ դուք ձեզէն պատմեցէք Պ. Հիւսպատոսին երեկեան աւուր ձեր Վսեմութեան ըսածներս, որ հարազատ հպատակի մը վրայ պարտք մը աւելցուցած կ'ըլլաք։—

Այս միջոցին Վսեմ. Սիւնիւֆ էֆէնտին կարելի եղածին չափ հաւկեց օր յառաջ սրբազան Պատրիարքին խօսածներն, և տեղ տեղ Վսեմ.

Վալի փաշայն եւս կը յիշեցնէր նոյն նիւթին վերաբերեալ տեղեկութիւններէն պակաս մնացածներն։

«Պ. Հիւսպատոսը կը խնդրէ ըսաւ Վսեմ. Սիւնիւֆ էֆէնտին, որ այս գործին սիրով վերջ մը տամք։ խաթինք դարձեալ շարունակեն իրենց սովորութիւնը, և ես սաստիկ պատուէր կուտամ երբէք կարգէ դուրս բան մը չընելու ձեր իրաւանց դէմ, նորանոր բաներ աւելցնելով ընդդէմ սովորութեան»։

—«Ե՛ծապէս շնորհակալ եմ Պ. Հիւսպատոս, ձեր բարեսրտութենէն, ըսաւ Ս. Պատրիարքը, որ սուրբ եկեղեցւոյ պաշտօնեաներն, որոնք սիրոյ և խաղաղութեան օրինակ ըլլալ պարտաւոր են, միշտ դուք զնոսա ի խաղաղութիւն կը կոչէք. այլ խաղաղութիւնն և սէրն միշտ երկու կողմէն պէտք է հաւասարակշիւ ըլլայ. փասն զի, որ սիրուի և ոչ սիրէ, բռնաւոր է այն պիտին, և որ սիրէ, և ոչ սիրուի, նահաւտակ է այնպիսին։ Ահա նոյն պարտաւորութիւն էր, որ զիս կը պարտաւորէր, ոչ թէ միայն սիրով եղած ժամանակ նիս, այլ և անոնցմէ մեղի թշնամութիւն անձրեւի պէս տեղացած ժամանակն անգամ, ինչպէս յառաջագոյն պատմածներէս ալ կրնաք մակարբերել։ Այնք ըրած էին իմ նախորդներս ալ, զնոյն և ես գործով ցոյց տուի իմ այս վեց տարի պատրիարքութեանս միջոցին՝ անոնց օրինակին հետեւելով, և համբերեցի անոնց յանիրաւի ըրած զրկողութեանց, բայց անոր փոխարէն միշտ ցաւ և խռովութիւն յարուցած են մեզ, ուրեմն ի՞նչպէս կարելի է, այսպէս յայտնի թշնամի մը, որուն այսօր բոլոր թշնամութիւնն և բրած չարիքներն արեւի պէս յայտնուեցաւ, կրկին անգամ թոյլ տամ որ գայ իմ սեփական եկեղեցւոյս մէջ

զիս նախատէ, զիս այսպանէ, և իմ անոխալ և անմահ Նրարչիս նուիրեալ սուրբ մեղանոյն վրայ, սխալական և մահկանացու մարդը անոխալ քաւրողէ, ես զնոյն իմ ախանջովս լսեմ ՚ի գայթակղութիւն համայն ազգայնոցս:—

Պ. Հիւսպատոսը պատասխանեց. «Բաբին անսխալութիւնն ձեզ ամենեւին փնաս մը չունի. եթէ փնաս մը կայ՝ մեղի է, մենք պէտք է մտածեմք և պատասխանեմք կամ բողոքեմք. ի՞նչ կ'ըլլայ տարին մի անգամ ձեր եկեղեցին պատարագ մը ընելով, մանաւանդ որ այսքան ատեն շարունակ ըրած են և իրաւունք ստացած »:

—Պ. Հիւսպատոս, կրկնեց Ս. Պատրիարքը, Բաբին անսխալութիւնն ինձ յայտնապէս փնաս չունի, վասն զի Հայոց ազգը իրեն համար Պապ ունի, ուրիշ Պապի կարօտ չէ. այլ կը հարցնեմ ձեր մեծութեան, ի՞նչու Վաղղիոյ կայսրը չընդունեց անոր անսխալութիւն, ի՞նչու նոյն ժողովքին հսկելու համար յատուկ մարդ խրկեց, աւելի զարմանալին ըսեմ, մեր մեծազօր (Օսմանեան տէրութիւնն ի՞նչու համար ՚ի շուր աշխարհի բողոքեց անոր անսխալութեան դէմ, և չընդունեց զայն, մանաւանդ որ ինքն Սահմատական ըլլալով երբէք անկից կախում չունէր, ի՞նչու ըրաւ, ՚ի հարկէ այդ անսխալութեան խնդրոյն տակ քաղաքական գաղտնիք մի նշմարեց: Բայց Բաբին նպատակը ի՞նչ էր ուրեմն անոխալ ըլլալու համար այսքան աճապարել՝ աշխարհաժողով ընել, և ի՞նչէն ստիպւեցաւ Հռովմայի եկեղեցիէն դուրս եղած բոլոր քրիստոնէից եկեղեցիներն անիծելու և նզովելու, և անոնց անմեղ ժողովուրդները, և միանգամայն սքեկեղեցիներն հերձուածող և հերետիկոս անուանելուդ և ի՞նչ հարկ

կայ ուրեմն նոյն անիծուած և նզովւած, մէկ խօսքով հերետիկոս կոչուած եկեղեցին գալու և պատարագելու համար այսքան իրար անցումներ ընել և մեր բարեխնամ Տէրութեան պատուական գլուխը ցաւցընել: Կը հարցնեմ ձեզ, Պ. Հիւսպատոս, արդեօք այս շարժմանս տակը դարձեալ գաղտնիք մը չկայ, մեզ Հայոցս համար վտանգ մը չըլլալուն կրնա՞ք երաշխաւորել, թէպէտ և ատենն անցաւ երաշխաւորելու, վասն զի Վատնիք իրենց վարմունքովը ամեն բան յայտնեցին, անոնց միտքը իմանալու համար աշխատանք չթողուցին մեզի:—

Վսեմ, Վալի փաշայն և Սիւնիսֆէֆէնտին Ս. Պատրիարքին այս ըսածները մի ըստ միովէ Պ. Հիւսպատոսին թարգմանելէ զինի, իրենք ալ իրենց կողմէն և երբեմն Պ. Հիւսպատոսին ըսածներն ալ՝, Սրբազնութեան կիմայնէին, սա մտքով թէ՛ եթէ կարելի է, այս դործին վերջ տրուի երկու ազգաց մէջ սէր և խաղաղութիւնը նորէն հաստատուելով:

Պատասխանեց Ս. Պատրիարքը. «Պ. Հիւսպատոս ձեր այս առաջարկածը քրիստոնէական պարտաւորութիւն մ'է, զայն ես արդէն գիտեմ, և գիտնալուս համար էր որ այս վեց տարի պատրիարքութե՛ չըջանին մէջ այսքան վշտաց և զրկողութե՛ համբերեցի, բայց մեր քրիստոնէաբար համբերութիւնն ձեր կարգաւորաց աւելի առիթ տուին կարծելոյ թէ՛ մենք իրենցմէ կը վախնամք. քան լիցի, երբէք վախ մը չունիմք մեծազօր Տէրութեանս շնորհիւ, որ գիտէ արդարապէս հսկել իւր հաւրապատ հպատակաց իրաւանց վրայ »:

Ժողովին արձակման ժամանակը մօտ էր երբ Վսեմ, Վալի փաշայն ոտք ելլալով ըսաւ. «Բաթրիք տօս, տօսմուդ, եարընքի կիւն պաշկայ պա-

գրլաճագ իշլերիմիդ վար, լարին պա-
գալըմ եարրն աղչամ մը օլուր՝ եա-
գուտ օպիր կիւն միւ օլուր, խապար
վերիբիդ, պույուբուպ կէլէսինիդ վե-
պու իշլերէ պիր գարար վերէլիմ:

Երբիւ պատրաստուէին մեկնելու,
Պ. Հիւպատոսը դարձաւ ըսաւ Վլ-
սեմ. Սիւնիւֆ էֆէնտիին. «Ալլինդ-
բեմ ըսէք Հայոց պատրիարք մեր բա-
րեկամին որ ներողամիտ ըլլայ՝ մինչեւ
ցարդ իրեն տեսուածեան չը գնալուս.
կը փափագիմ երթալ տեսնուիլ, ինչ-
պէս որ պարտաւորութիւնս ալ է:»

— Զեր գալէն յառաջ մենք պար-
տաւոր էինք, Պ. Հիւպատոս, ը-
սաւ Սրբազան Պատրիարքը ձեր բա-
րի գալուստը շնորհաւորելու, գալ
մանաւանդ ձեր սուրբ Երուսաղէմ
մտնելու օրը անգամ պարտաւոր էի
Թարգմանս և եասախճիս ձեզ դի-
մաւորելու խրկելու, եթէ Լատինաց
վանքէն կամ սուրբ Երուսաղէմի Վաղ-
ղիակա Պ. Հիւպատոսի կողմէն մեզ
ըւր տրուած ըլլար, այդ վասն ձեր
ներողամտութիւնն կը խնդրեմ յայտ-
նելով ձեր Վսեմութեան որ միշտ
պատրաստ եմք զձեզ պատուելու
ըստ կարեացս, վասն զի այլէ քաղա-
քականապէս տեսակցիլ պատուել և
պատուիլ, այլէ սեպհական իրաւանց
վրայ խօսակցիլ և նորա համար գատ
վարել: —

«Շնորհակալ եմ մեծապէս ձեր
այս օրինաւոր միանգամայն մարդա-
սիրական խօսակցութենէ, պատասխա-
նեց Հիւպատոսը, և այս խօսակցու-
թիւններն ինձ մեծապէս յոյս կուտան
որ, այս գործոյն խաղաղասիրական
կերպիւ վերջ մը պիտի կրնամք տալ,
և երկու կողմը դո՛հ ընելո՞ւ:»

— Եւ դ իսկ է, Պ. Հիւպատոս, իմ
փափաքս ալ, բայց առանց մէկուէն
իրաւանցը դպչելու պայմանաւ, երբ

արդարութեամբ իւրաքանչիւրոց ի-
րաւունքը կը յայտնուի և կը ստու-
գուի, գործը ինքնին կրնայ վկայել
որ, ով է զրկողն և ով է զրկեալն. իմ
սրտիս մէջ եղած վէրքերը չեմ կրնար
այս նեղ միջոցին ձեր Վսեմութեան
յայանել մանաւանդ որ Վսեմ. Սիւ-
նիւֆէնտիինալ բաւական նեղութիւն
տուած պիտի ըլլամ իմ խօսածներս
ձեզ Թարգմանելու. միայն սա կ'ա-
ղչեմ, քանի որ Վսեմ. Վալիփաշայն
և Սիւնիւֆէնտիին և ձեր Վսեմ.
մութիւնն հոս էք, օր մը յանձն առէք
միասին Սիւն լերան վրայ գտնուած
երէք աղգաց գերեզմանատուններն
աչքէ անցնելու և անոր քննութեան
կայ գտնուելու, և Լատինաց ըրած
շինութիւն և յանիրաւի իմ սեփհա-
կանութեանս վրայ երկու դուռ մէկէն
բանալին տեսնել քովը Թագաւորա-
կան արձակ պողոտայ եղած Ժամանակ.
և խօլոյն պիտի համոզուիք իմ արդար
և սեփհական իրաւանքիս չարաչար
բռնաբարութիւն Լատին կղերաց կող-
մէն, և այն՝ Վաղղիայ Հիւպատոսին
պաշտպանութեամբը: Եւ նոյն արդար
իրաւունքիս դատը եթէ յանձն կ'առ-
նու Պ. Հիւպատոսը, իրեն կը յանձ-
նեմ հիմակուց, ինչպէս որ կը պա-
հանջարդարութիւնն անաչառապէս
դատէ զայն, և ես երբէք չգամ նոյն
օրը ձեր Վսեմութեան հետ, և ոչ բան
մը յաւելում խօսել, տեսնեմ ինչպէս
պիտի կրնայ արեւի նման յայտնի ե-
րեւցած իմ բռնաբարեալ սեփհակա-
նութիւնս չտեսնել, և իւր սեփհա-
կան տիրոջը չդարձնել, վասն զի ոչ
ոք կարէ այդ զրկուութիւնն ընելա-
ռանց արդարութեան դէմ չարաչար
մեղանչելո՞ւ: —

«Շատ բարի, կուգամ անձամբ
կը տեսնեմ, ըսաւ Պ. Հիւպատոսը,
և երբէք չեմ ուղեր որ ձեր իրա-

ւուներն կորսուի. ես կ'ուզեմ որ ամեն մարդուն իրաւունքը իրեն տրուի, և միշտ խաղաղ և սիրով լըլան, ինչպէս կը պահանջէ քրիստոնէութիւնն և միանգամայն ազգաց իրաւունքը ։ Կ

— Այլ իրելի էր ինձ, ըսաւ Սրբազան Պատրիարքը Վսեմափայլ Քեամիլ փաշային դառնալով, եթէ կարող ըլլայի Պ. Հիւպատոսին հետ բերան առ բերան խօսիլ առանց ծանոթութի տալու Վսեմ. Թարգմանին, և իւր լեզուովը յայտնէի իրեն իմ օրախ խոր ցաւերը, վասն զի գիտեմ որ ձեր Վսեմութիւնը Թարգմանելու ժամանակ բնականապէս իմ խօսքերս կը զեղջէք ։ —

Այս խօսքերուն վրայ Սիւնիւֆէֆէնտին ժպտեցաւ, և Ս. Պատրիարքը բաժնուեցաւ խնդրելով իրենցմէ որ ներողամիտ լըլան իր տուած ձանձրութեանը, աւելի ընդարձակ տեղեկութիւնները ուրիշ ժամանակներու մէջ տալու խօստանալով ։ « Քանի որ հոս էք, ըսաւ, մէկ բանի անգամ տեսնուելու բազդը պիտի ունենամք, և պէտք եղած տեղեկութիւնները ձեզ հաղորդել, ինչպէս որ դուք արդէն կը փափայէիք լիովին տալեկանալու ։ »

Անկնելու միջոցին Վսեմ. Քեամիլ փաշային և Պազդիսի Հիւպատոսին հետ ընկերացած դուրս ելլելուն Ս. Պատրիարքը քաղցր ժպիտով մը նային Վսեմութեան մօտենալով ըսաւ. « Եւ իրն գրեմ Փաշայէֆէնտի, չնորհք ընէք Թարգմանել Պ. Հիւպատոս մեր բարեկամին և յայտնել իրեն որ իմ խօսքերս որքան որ եռանդուն կ'երեւին, և բորբոքած օրտէ մի յառաջ եկած, սակայն կը խնդրեմ չկարծէ որ ատելութեան նշան մի է այն, այլ վշտաց և ցաւոց, զոր Ֆրանչիսկեան յարգելի կրօնաւորները տուած են ինձ, որոնք փոխանակ արեւելքուց հետ քաղաքա-

վարութեամբ վարվելու և բարեկրթութեան օրինակ լինելու, որովհետեւ քաղաքակրթեալ աշխարհէ եկած են, և մեզ Թուրքաստանցւոցս պէս չեն, որ իրենց աչքին բիրտ և սուր մարդիկ համարուած եմք, սակայն կը յուսամ որ Պ. Հիւպատոսը մեր գործերը տեսնելով և անոնց արարքները և օրինաց և իրաւանց հակառակ ընթացքը նշմարելով, անաչառապէս մեզ իրաւունք պիտի տայ ։ Եւ այս իմ ըսածներս հաստատելու համար էր որ քիչ մը յառաջ Վսեմ. Սիւնիւֆէֆէնտին միջոցաւ իւր Վսեմութեանէն խնդրեցի յանձն առնուլ գալ Սիւնի գերեզմանատան քննութեանը ներկայ գտնուիլ և իրքն անձամբ ըլլալ անաչառ դատաւորը և միանգամայն իմ կողմանէս դատախազը, ուրեմն այսու պայմանաւ մնացէք բարեաւ » ըսելով բաժնուեցան ։

Հետեւեալ օրը 'ի 26 () Գոստոսի եղած նիստին մէջ, Թէպէտ եւ Հայոց Ս. Պատրիարքին ներկայութիւնը կարեւորութիւն մի չունէր, սակայն կանչուած լինելուն՝ փութացաւ երթալ ։ Ինչիրն էր յառաջնութեան վերայ 'ի մէջ Յունաց և Ատրիանաց մեծաւորին, որովհետեւ երկու կողմն ալ կը պնդէր հաստատապէս թէ՛ իւրեան կը պատկանի յառաջնութիւնը, նախապատիւ լինելու թէ՛ կառավարութեան ժողովոց մէջ և թէ՛ հանրագրութիւններ ստորագրելու ։ Ինչիւրն ինչպէս յայտնի է, փառապիտութեան վրայ կայացեալ էր, որուն երբէք հետամուտ եղած չէ հայկական կղերք, վասն որոյ Սրբազան Պատրիարքը միայն ունկնդիր էր սոյն նիստին մէջ. բայց երբ սաստկացաւ խնդիրը ըսաւ Ս. Պատրիարքը Վսեմ. Վալի փաշային. « Իֆէնտիմ, այս դատը շատ դիւրութեամբ կրնայ լուծուիլ ։

եթէ կը ներէք՝ ըսեմ : Վանի որ այս
մեր եղբայրները այսքան կը հակառա-
կին և կըսնդեն և երբէք զիջում չեն
ցուցներ , և չեն ուզեր համազուիլ ,
հրաման ըսէք՝ որ Հայոց Պատրիարքին
փոխանորդը նախ թող կնքէ , և այսպէ-
սով ինքնին կը լուծուի խնդիրը : »

Այս խօսքը թէպէտ և զուարճա-
բանութիւն մի էր , այլ կերպիւ իւրիք
ճշմարտութիւն մի եւս ունէր իր մէ-
ջը , քանի որ մեր բարեխնամ Տէրու-
թեան հարազատ հպատակն եմք : Այս-
այս խնդրոյն լուծում մը տալու հա-
մար կանչեցին նախ Վատինաց կողմէն
եկած կարգաւորը յառանձին սենեակ
մի , և անոր դուրս ելնելէն յետոյ Յու-
նաց Պատրիարքը կանչեցին նոյն սենեա-
կը դարձեալ առանձին , և ապա լուծում
մը գտնալու համար հարկ եղաւ քրն-
նել թէ՛ Պաղեստինու երկրին մէջ որ
աղգը կամ հասարակութիւնը յառաջ
է բնակութեամբ քան զմիւսն , ուս-
տի փողովն լուծուեցաւ առանց ինչ
որոշման :

(Հարոհանալիք) :

ԼՈՅՍ ԵՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ԺԹԻՂ դարու մէջ ահա տարի մ՝
ալ ողջունեցինք , բայց այս դարը մար-
դկային ազգի զարգացման լուսաւոր
դարն է :

Ազգի մի զարգացում իւր ներքին
և արտաքին կացութենէ կախում ու-
նի , և ազգի մի կացութիւն այն ժա-
մանակ բարւոք է՝ երբ լուսոյ մէջ
կ'ապրի :

Ար և իցէ ազգ երբ խաւարի մէջ
կ'թափառի և խաւարի մէջ կ'գործէ ,

թշուառ է նա միշտ , թշուառ և իւր
ապագայն , և հետեւաբար միշտ գը-
լորման ենթակայ , բայց երբ լուսոյ
մէջ կ'ապրի և կ'գործէ , երջանիկ է նա ,
երջանիկ և իւր ապագայն , վասն զի
աղգի մի բարօրութիւն միշտ լուսէ
կը ծնի :

Այո , երկնային պատգամ մի է
այս որ միշտ մահացու սրտեր կը յու-
ղէ , այո՛ պատգամ սրբազան , որ զմար-
դիկ ՚ի զարգացումն կ'հրաւիրէ : Վա-
նինէր լոյս աղաղակելով թռան ան-
մահութեան հովիտը , զոր իրենք լու-
սոյ աշխարհ քարոզելով յոյս ՚ի սիրտ
թռան : Վանինէր լոյս , լոյս մարդկու-
թեան գոչելով և կրկնելով զայն սլա-
ցան այն Ամահին ծոցը , որ նոյն լոյ-
սը ու հուրը նոցա սրտի խորանի մէջ
վառած ու բորբոքած էր , թռան նո-
քա և մարդիկ սկսան զարգանալ , և
սկսան թօթափել այն դարաւոր սեաւ
փոշին իրենց ճակատուց վրայէն , զոր
անգութ ժամանակը իբր մարդկու-
թեան նախատանաց սեաւ կնիք մի
թողուցած էր ՚ի յիշատակ :

Ա՛յլ էին այս լուսոյ սրբազան նա-
հատակները : — Վարդկութեան բա-
րերարներ : Ա՛յլ անջնջելի մնաց նոցա
սուրբ յիշատակը : — Վարդկութեան
զարգացման տաճարներու մէջ :

Վասն զի , ուր լոյսը հսկայաքայլ
յառաջադիմեց , հոն մարդկութեան
զարգացումը տաճարներ կանգնեց ,
և երախտագէտ սրտեր հոն պատուե-
ցին այս լուսոյ նահատակաց սրբա-
զան յիշատակը , և հոն երկիրպագին
գոհ և ուրախ սրտիւ այն օրհնեալ
գերագոյն Վին անուան որ նոյն լու-
սով նոցա սրտերը վառած ու բորբո-
քած էր : Վասն զի զարգացումը սոր-
վեցուց թէ՛ ազգի մի լոյսը այն ատեն
վառ ՚ի վառ կը փայլէ , երբ մարդ-
կութեան զարգացման բարերարնե-

բու յիշատակը կը պատուէի, և ազգի մի զարգացումը այն ատեն կը յառաջագործէ, երբ խրախոյան ու յոյսը կը վառէ և կը բորբոքէ զարգացման յետագայ նահատակաց եռանդուն սրտերը : Դարերէ յառաջ երկնային պատգամ մի էր այն որ մահացուաց զարգացման մարդասէր նահատակի մի շրթէ թուշելով գնաց զարգացման և լուսոյ պաշտպան բարերարաց սրտից տաճարի սեմոյ վրայ դրօշմուեցաւ թէ՛ « Ուր պսակ՝ անդ զարգացում » : Եւ ալ նոյնը կը կրկնէմ : ուր պսակ, ուր քաջալերութիւն, հոն զարգացում, հոն բարօրութիւն և երջանկութիւն :

Վասն զի նա ինքն յաւիտենական Երդարութիւնն երբ իւր անմահութեան լուսոյ փառաց համանման այս հրաշալի էակն (զմարդն) ստեղծեց և իւր աստուածային զօրութեան մըջ տաքարբառ վկայ այս սքանչելի հովտի մէջ իբր անձնիշխան ազատ էակ մի աշխարհիս բոլոր վայելքները ու բարիքները վայելել սահմանեց, նա ինքն որ լոյս էր և լուսոյ Ետուած, իւր այս չքնաղ արարածի իւր մարդասէր գթութեան գրասական եղող լոյսն ընծեռել շնայեց, շնորհեց և մարդոյն լոյս, օրհնեց մարդկութիւնն, որպէս զի մարդիկ կարողանան այս լուսոյ շնորհիւ իմանալ իրենց պարտաւորութիւնքն ու իրաւունքն : Եւ ըստ այնմ շարժելով պահել ու պաշտպանել զանոնք : Ուստի էակ մի երբ այս լուսոյ գոյութիւնը ուրաշալով խաւար քարողել կ'իշխէ, այն ժամանակ աստուածութեան ահաւոր մատը կ'ստիպուի դրօշմել նորա դրժխեմ ճակատու վրայ « ամբարիշտ » բառը, բառ մը որ սոսկում ընծայել միայն գիտէ մահացուաց :

Եւ մեղք ազգեր որք այս լուսոյ զի

նուոր գրուելով զլոյսն յարգեցին, նա քա զարգացան, և ազգեր որք ուրաշացան և նախապատիւ համարեցին խաւարի մէջ ապրիլը քան լուսոյ մէջ, նոցա լիկ անուանքն այսօր ազգութեանց շարքի մէջ մարդ միայն կրնայ գտնել, իսկ աշխարհի մէջ անհատ մի երբէք :

Եւ այս, այս՝ ստուածային շնորհը, ուր կը փայլի, հոն մարդկային կենաց բարօրութիւն ալ կայ, և հոն մարդկութիւնը կը յառաջագործէ, և ազատ սրտեր հոն միայն կրնան ազատաբար յառաջ որոտալ : Բայց խաւարը ուր իւր սեւաւ թեւերը տարածած և հոգւոյ աչեր կուրացած կը թագաւորէ, հոն թշուառութիւն և խեղճութիւն, ուր խաւարատէր էակներ միշտ զլոյսն հայհոյելով՝ խաւար կ'աղաղակեն : Վասն զի խաւարը նոցա անօրէնութեանց ոճրից և բռնութեանց գործակից է միշտ :

Եւ լուսոյ ձայնը նուիրական է, քաղցրը և ախորժ մահկանացու լսելաց, ուստի խաւարի մէջ ծնած ու սնած այն դժբաղդ մարդը երբ լոյս նշմարելով կ'սկսի խլրտիլ, ահա խաւարը իբր անգութ հրէշ մի կ'աղաղակէ « կեցիր » : Ո՞վ պիտի ըլլայ ուրեմն այս մարդացաւ հրէշի ախոյեանը : — Մարդկութեան բարերար մի : Որ վեհ սրտիւ առ ոտն հարկանելով ալ մէն խոչք և խուժք, հուսկ ուրեմն պիտի յառաջագործէ և պիտի յառաջացնէ ընդ իւր խաւարի մէջ գտնուած թշուառ խմբեր :

Եւ նէ ազգութիւն, կը հարցուի : — Մարդկութեան խումբ մի, լեզուաւ և հայրենեօք մի : Եւ նոյն կը բաղկանայ ազգ մի : — Եւ հասաներով : Եւ նոյն անհատը կրնան յառաջագործել — ուսով և լոյսն : — Սակաւ : Եւ, պսակ յերկնից եւ ՚ի մարդկանէ : Եւ ուր

աղբ մի երբ չունի լոյս, և կարողութիւն կամ հաճութիւն առ ի շնորհել պատկ, թող չըլուսայ բնաւ զարգացում. այլ գլորում, գլորում ի վիհն թշուառութեան և հիշքութեան, վիհ սոսկալի, ուր գլորիլը թէսլէտ դիւրին՝ բայց ելումը դժուարին և թեւեւ անկարելի :

Այս կ'աղաղակէ մարդկութեան զարգացման այս լուսաւորեալ դարը, մարդկութեան զարգացման փափագող սրբազան էակներ. պսակ կը կրկնեն զարգացման և լուսոյ համար նահատակեալ դարերէ անտի չորցած կմախքներ. Վորձանում, գլորում, վերջապէս թշուառութեան վիհն ձեզ կ'սպասեն, ո՞ խաւարի մէջ դեգերող մարդկութիւն թշուառ խմբեր : Փութացէք լուսոյ տաճարը, զարգացման այն միակ օթարանը, փութացէք և պսակներ թափել այն վիհ գլուխները, որք մարդկութեան զարգացման լոյսը ձեզ մատակարարել կարող պիտի ըլլան, ապա թէ ոչ ժամյառաջ գլորեցէք թաղուեցէք այն ձեզ նման վատ ազգաց համար պատրաստեալ դատապարտութեան անդնդոց յատակը, որու յաւիտենական խուփը ինքն Աստուած դնելով մարդկութիւնը նախատանաց սեաւ կնքաւ պիտի կնքէ զայն ի յիշատակ վատութեան ձեր և ի սոսկումն այլոց յառաջագիւ մասէր ազգաց :

Վասն զի, ո՞վ վառեց այդ լոյսը մարդկութեան սրտի մէջ. — Աստուած : Ո՞վ այդ լուսով փրկութեան յուսաց. — Սարդկութիւնը : Ուրեմն անշուշտ Աստուած և մարդկութիւնն է դատախազ այն ազանց՝ որ նոյն լուսոյ գոյութիւնը ուրանալով մարեցին զայն վատարար իրենց սրտի մէջ : Աստուածութիւնը այս լոյսը սրտի մէջ հաստատեց, այս լոյսը սրտի զգացման

թելերու թրթուման շարժառիթն է. այս լուսոյ շնորհիւ մարդուս սրտի զգացման թելերը թրթալով աղաղակ մի, ձայն մի է, որ յանկարծ կը թռչի կը սրանայ սրտի խորերէն և կը կրկնուի. յառաջ յառաջ. և մարդկութիւնը նոյնը կը կրկնէ՝ յառաջ յառաջ :

Անիծեալ նա ուրեմն որ սոյն սրբազան ձայնի իւր ախանջը կը խնու. անիծեալ որ չը կրկնէր ինքն եւս նոյն նուիրական բառը, որ մարդկութեան զարգացման և փրկութեան ճանաչարհը կ'առաջնորդէ : Ո՞վ կրնայ ուրանալ, միթէ մարդկային ազգի զարգացման այնչափ բարեքները որք լուսէ կը ծնին, և ո՞վ կրնայ ասել թէ մարդիկ թշուառ կ'ըլլան երբ լուսոյ մէջ ապրին կամ գէպ ի զարգացում յառաջագիւմն : Հրէշ մի՛ մարդկութենէ դատապարտեալ ճիւղալ մի է նա՝ որ մոռթի մէջ գործել կը փափաքի և կը գործէ. անիծից և նախատանաց արժանի վատ մի որ խաւարը լուսէն նախապատիւ համարելով խաւար կը քարոզէ մարդկանց : Ո՞հ այնպիսւոյն վատ անունը դժոխոց սեաւ սեւ մոց վրայ մարդ միայն կրնայ կարգալ մարդս լուսով ստեղծուած և լուսոյ մէջ գործելու սահմանուած էակ մի է և ոչ խաւարի : Սարդս լուսոյ Աստուծոյ պատկերն է, այս լոյսը միայն կրնայ մարդուս ճանկնել իւր սուրբ պարտաւորութիւններն, որ առ Աստուած և առ մարդն :

Իսկ մի՛ առաքինի և մարդասէր է երբ իւր նմանւոյն կը կարեկցի, արդար է՝ երբ տկարին իրաւունքն կը պաշտպանէ կամ կը յարգէ, երբ կարող է զայն ռանակոխել. բայց էակ մի սուրբ է և սրբազան, երբ իւր նմանւոյն իրաւանց պաշտպանութեան կամ նորա փրկութեան համար արիւն կը թափէ : Ո՞վ է այս պարտաւորու-

Թիւնքն մարդուս քարոզողն : — | Եւսր

|| Կրօններ մի կամ օրէնք այն ա-
տեն գերագոյն կրնայ համարուիլ երբ
նորա հիմը արդարութիւնն և հիմնա-
դիրն արդար մի կամ սուրբ մի ըլլայ,
և լոյսը նոյն սկզբանց կամ օրինաց
գրքի մէջ փայլի և զարգացումը հոն
բարձր 'ի գլուխ Թագաւորէ : () Երէնք
մի սկզբունք մի վստթար է՝ երբ անի-
բաւութիւնն հիմն է և հիմնադիրն
բռնաւոր մի կամ բարոյապէս տկար
մի եղած է, և ուր լոյսը նսեմ և զար-
գացումը կաղն 'ի կապ կը բայլէ : || Ը-
րադարձ է նա՝ որ նոյն սկզբան կամ
օրինաց գրքայկը ոչնչութեան այն վի-
հը նետել որու խուփը և կնիքը մարդ-
կութեան արդար ձեռքը ինքն կը դնէ
և կը գրողմէ : | Կան զի ազգի մի բա-
րօրութիւնն իւր օրինաց պահպանու-
թենէ ալ կախում ունի, բայց այնպի-
սի օրինաց պահպանութենէ՝ որու
լոյսը 'ի զարգացում մղէ և ոչ 'ի կոր-
ծանում և 'ի գլորում :

|| Վ պիտի տայ մարդուս այդ կա-
րողութիւնը, որ իւր օրինաց կամ ըս-
կզանց գրքայկը քննէ ու դատէ : —
| Եւսր :

| Դոս, այս է մարդկութեան զար-
գացման միակ առաջնորդը :

() Երէնք մի՛ ուր բազմաց ձայնը
խղղուած է կամ բռնաբարուած՝ հոն
և դարձեալ Թշուառութիւն և գլու-
րում :

|| Կարդկութեան բարեբար մի առ-
տուածութեան ընտիր պաշտօնեայ մի
“Չայն բազմաց, ձայն Եստուծոյ” ը-
սաւ, ես ալ նոյնը ըսելով՝ կը կրօն-
նեմ թէ՛ ձայն բազմաց ձայն Եստու-
ծոյ այն ատեն՝ երբ լոյսը ընդհանու-
րին կամ գոնէ բազմաց սրտի մէջ կը
վառի : | Կան զի ինչ բարիք կամ ինչ
զարգացման յոյս կրնայ յուսացուիլ
այն խուժանէն երբ խաւարի մէջ կ'ստ-
գի խաւարի մէջ ապրող խուժանի ձայն
ընդունիլն է : Գարգացման ձայն
մի որ լուսաւոր սրտէ կը բղխի, նա-
խապատիւ է միշտ հազարաւոր ձայ-
նեւրէ, որ խաւար կ'ազդակեն, լոյսը՝
այս կը քարոզէ կը սորվեցնէ թէ մար-
դիկ պարտին միշտ իրենց կենաց բա-
րօրութեան շաւիղը որոնել և պարտին
հետեւիլ այն ձայնին, որ 'ի բարօ-
րութիւն կ'առաջնորդէ, թէ և մի
ըլլայ, և ոչ հազարաւոր ձայներու
որք միշտ խաւար կը կանչուրտեն,
և միմիայն զմարդիկ 'ի Թշուառու-
թիւն առաջնորդել գիտեն :

| ուսաւորեալ որտեղու ձայն երբ
կը խղղուի իրենց սրտի մէջ, կամ կը
բռնաբարուի, ամբողջ ազդութեան
մի յետագայ սերունդը անշուշտ պի-
տի հեծէ, պիտի հեծէ այս իւր առ-
խուր վիճակին վրայ՝ զոր Թողուցին
իւր հարքն և հաւքն անմիտք, և ա-
նիծից շանթեր պիտի անդադար տե-
ղայ նոցա ցուրտ շիրմաց վրայ փախա-
նակ զի չարգեցին բարոյական ճշմա-
րիտ լոյսը և չը ճանչցան ազգի մի զար-
գացման կարեւոր սկզբունքները, և
չսեցին ազգի մի 'ի բարօրութիւն ա-
ռաջնորդող կենսատու ձայներուն :

| Երջանդէս լուսաւորութիւնը ազ-
գերու զարգացում ըսուեցաւ, բայց
ինչ՝ զարգացում՝ կրնայ յուսացուիլ
այն ազգէն, երբ խաւարի մէջ կ'ստ-
գի և կը գործէ, ինչ բարօրութիւն
կրնայ յուսալ այն ազգը, որու ան-
հատները խաւարի մէջ ապրելով լու-
սէ միշտ հեռի կը փախչին, և ինչ կրնայ
յուսալ ընդհանուր մարդկութիւնը
այն խմբէն որ իւր բարեբարաց սրտի
ընձեռել կամ գոնէ լոկ քաջալերել
չը գիտէ : — | Երէնք :

|| Կստի մասնաւորելով ըսածնիս՝
պատմեմք ուրեմն թէ Զայ ազգը ու-

նեցան լոյս, և երբ, և այժմ լուսոյ
մէջ կ'ապրի թէ խաւարի, և ինչպէս:

(Հարաւանիք):

1870 Յունւար . 7

Կարապետ Տ.

Երեսմասէմ:

Մինասեան:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՐԾՆԻ ՈՒՍՄԱՆ
ՕԳՈՒՏԵՆ ՈՒ ՄԻՒԹԱՐՈՒԹԻՒՆՔԸ

Այդպէս մատենագրութիւնը մեզ
մատնանիշ կը ցուցնեն՝ որ թէ նախ-
նի և թէ նոր դարերու մէջ ազգի մը
կամ ժողովրդեան մը գէտ ՚ի բարոյա-
կան յաւաքագիծութիւն, գէտ ՚ի բա-
րոյական կեանքը առաջնորդողը միշտ
կրօնական միտումը եղած է: Եթա-
նստութեան ասեմն Յունաց մեծ պար-
ծանքն էր բազմաստուածեան՝ կրօնին
վրայ հիմնեալ փիլիսոփայութիւնը և
այլ ճշմարտութիւնք կամ գեղար-
ուեստք: Այնպէս և ուրիշ ազգաց:
Սակայն երբ խաչը յաղթանակեց, ա-
մեն ինչ՝ որ իրեն ընդգէմէր, անհետ
եղաւ: Աստուածք իրենց տաճարե-
րու աւերակաց տակ ամօթապարտ
մնացին: Խաչի յաղթական դրօշը ծա-
ծանեցաւ այն աւերակաց վրայ, և
խաչի պարծանքը տիրապետեց ամեն
սրտերու, ամեն հոգիներու և ամեն
խիղճերու վրայ: Սկսան այնուհետեւ
մարդիկ քրիստոնէական կրօնի ուսման
չնորհիւ և խաչին լուսով լուսաւորիլը
որով տեսան ճշմարտութիւնը որ մին-
չեւ այն ժամանակ մարդկանց համար
ամպամած էր, ինքզինքնին՝ Աւետա-
րանի բազկաց մէջ նետեցին և խաղա-
ղութեամբ ապրիլ սկսան:

Ճշմարիտ է որ, թէպէտ և աշ-
խարհիս վրայ ապահով և երջանիկ

ապրելու տենչը ընդհանուր է, ամեն
որ կը ջանայ հանգիստ ապրելու մի-
ջոցներ գտնել: Իսկայ ծայրագոյն սր-
խալ մը կամ կուրութիւն մը կայ այս
իզձին մէջ, այսինքն կան շատ մար-
դիկ, որք կրօնքէն դուրս, արտաքոյ
Աւետարանին կ'որոնեն այդ միջոցները,
և յանձնադաստանութեան անարգ-
հոգւով ամեն բանի կարող, ամեն
բանի հմուտ կը կարծեն զիրենք: Ե-
րբեմն ալ իրենց հոգւոյ կուրութիւն
Աւետարանին գծած շաւիղը և ցու-
ցրցած միջոցները խիստ կը համարին,
և ծանր՝ կրօնի քաղցր լուծը, ի հարկէ
չենք կրնար ըսել և կարելի չէ հաւա-
տալ իսկ որ այսպէս թիւր դատողնե-
րը ճանցած են ըստ ամենայնի կրօնի
հոգին, զգացած Աւետարանի քաղց-
րութիւնը և միտմարութիւնը, եւ
թէ ունին լուսաւոր ագք նորա ճըշ-
մարտութիւնները տեսնելու: Այլ
ընդ հակառակը անոնք են, որոնք
հոգւոյ մեծութիւնը առ ոչինչ կը
դնեն, և երջանկութիւննին սոյն խա-
բուսիկ կենաց մէջ գտած կ'երողեն,
հոգւով անձնատուր են աշխարհի
ունայնտութեանց և սրտով դաշն են
կնքեր հակառակ կալ ու մնալ ճշմար-
տութեան ընդ միշտ:

Սակայն աշխարհի զոհ եղող այդ-
ապիկար մարդը, այսպիսի վատ և
մոլի կեանք մը վարելու համար բնաւ
աշխարհ չէ եկած, իւր կոչումը մեծ
և վսեմ է, և իւր առջին մինչեւ Առ-
տուծոյ նմանելու խիստ մեծ ասպա-
րէզ մը կայ: Աշխարհի անձնամասն
ըլլալ՝ մարդուն խիստ անպատեհ է,
վատն զի ինքը երկնաքաղաքացի ըլլալու
համար ստեղծուած է, իւր Արարչին
փառքն ըլլալու համար ծնած է: Իւր
կուրծքին տակ գտնուած սիրտը ճըշ-
մարտութեան համար միայն պէտք է
ախտ, և սէրը միայն աստիճան

ներլու է : Եւ իր հոգին՝ որ միշտ դէպ
առ Մտուած վերադառնալու կը նկր-
տի , ուստի պէտք է զայն կաշկանդող
զայն կրից և մոլութեանց տակ ընկ-
նող շղթայքը փշուրէ , որ խիստ դիւրին
է Լեւտարանի ցուցած միջոցներով :
Նա կ'ուսուցանէ մարդուն հոգւոյ
մեծութիւնը . նա կ'ուսուցանէ գե-
րագոյն Լրարչի մը սիրելի արարած
ըլլալը . կ'ուսուցանէ մեր երկնաւոր
Հօր նմանելու ջանք և փոյթ ունե-
նալ . կ'ուսուցանէ վերջապէս՝ զաշ-
խարհ մեզ ծառայեցնելու կերպը :
Որչափ մխիթարական և երկնային են
ասոնք իւր կոչումը գիտցող քրիստո-
նէի մը : Եւ յապիտի կրօնք մը սիրել մի-
թէ շատ քաղցր և դիւրին չէ՞ , բայց
սիրելէ առաջ՝ ճանչնալ պէտք է , և
ճանչնալու համար՝ ուսանիլ կրօնքին
ճշմարտութիւնքը , որ զմարդիկ Լու-
սուծոյ գրկախառնութեան կ'առաջ
նորդեն . մէն մի անհատի նուիրական
պարտաւորութիւնն է , սակայն սի-
րելը ճանչնալ և ուսանիլ միայն բա-
ւական չեն , այլ զանոնք գործադրել
հարկ է : Կրօնքին էական կէտը կամ
հոգին գործն է . ամեն ժամանակի և
ամեն առթիւ Լեւտարանի պահան-
ջն ալ գործն է , առանց գործոց հա-
ւատքը մեռեալ է : Գործքով միայն
մարդ մը , կամ քրիստոնէայ մը գիտէ
համարձակօրէն ըսել և միանգամայն
պարծիլ ՚ի Յիսուս թէ՛ գերագոյն
կրօնք մը ունիմ , կը ճանչնամ և կը
սիրեմ զանի ՚ի սրտէ և անոր հեղինա-
կին Մտուածոյ՝ կ'երկրպագեմ՝ հոգ-
ւով : Ուրեմն Քրիստոնէի մը առաջին
պարտաւորութիւնն է ուսանիլ գոր-
ծադրելու համար այն ամեն ճշմար-
տութիւնքը , որք կրօնքը կը կազմեն .
որոնք Լեւտարանի հոգիէն կը բխին .
ուսանիլ յուսահատեալները մխիթա-
րելու , անկեալները կանգնեցնելու ,

գայթակղեալները համոզելու համար :
Յիսուս՝ ամեն բանէ առաջ ճիշ-
մարտութիւն ուսանիլ կը յորդորէ
զմարդիկ , «Սարթան , Սարթան , դու
հոգաս և բաղում իւրիք զբաղեալ ես ,
բայց աստ սակաւ ինչ պիտոյ է ք :
Յիսուսի այս խօսքը դառն կշտամ
բանք մ' է աշխարհասէր մարդկանց ,
որք թեթեւամտութեամբ ճշմար-
տութենէ հեռանալով , սին եւ ու-
նայն փառքերու մէջ ՚ի զուր կը թար-
թախին հանգիստ գտնելու : Կ'ըսէ
անոնց թէ՛ այդ ամեն խուճապը ու-
տագնապը չեն հոգւոց բաժին , բաւ
է անոր համար միմիայն ճշմարտու-
թեան ուսումը . հոն է սրտին սնունդը
և հոգւոյն բաժինը : Սի և նոյն խօս-
քը մխիթարական քաջալեր մ' է ա-
մեն անոնց , որք աշխարհի ամեն փա-
րիսեցութիւններէն , ամեն նենգու-
թիւններէն ձեռնմխալ , ճշմարտու-
թեան զինուոր գրուած են : Եւ ստու-
գիւ քրիստոնէայն՝ որ յաղթանակող
Յիսուսին դրօշակիրն է , նա ինքն ալ
պատեւրաղմ ունի աշխարհի աղէտից
դէմ , բարոյական բռնակալութեանց
դէմ , ստութեան և ամեն տեսակ ա-
նիրաւութեանց դէմ : Լսոնց յաղթա-
նակելու համար Լեւտարանի յաւի-
տեհական լոյսը առաջնորդ ունենա-
լու է մարդ , և նորա սիրով վառուած
ու ոգեւորած լինելու : Օմարդիկ
աշխարհի մեծ ճակատամարտին մէջ
անվեհեր ՚ի պատեւրաղմ խրախուսողը
ճշմարտութեան ձայնն է :

Ըրդ՝ բանի որ անցնիւր քրիստո-
նէայ զինուոր է , պէտք է աւետարա-
նի զինուորական կրթարանին մէջ մար-
դիկ , ուր հոգիները կը կրթուին և
սրտերը կը մշակուին ու կը բարգա-
ւաճին , և այս մարզը կամ ուսումը
ամեն աստիճանի և ամեն կարգի մար-
դկանց պատկան է : Եթէ ընտանե-

կան կենաց մէջ մուտք ունենայ, հոն
կը թագաւորեցնէ կոյս և անբիծ հա-
ւատարմութիւնը, կ'ազնուայնէ և
կը սրբէ այն կեանքը : Աթէ անխորձ
երկտասարդը խորհուրդ հարցնէ ա-
նոր, հասու պիտի լինի զինքը խաբող
վայելութեանց ունայնութեանը, և
պիտի գտնէ հոն այնպիսի մեծութիւն
և ճոխութիւն հոգւոյ, որ զինքը Յի-
սուսին կը միացնեն : Գերեզմանին
եզըը հասնող ալեւոր ծերունին հոն
կը գտնէ այնպիսի մխիթարութիւն-
ներ, որ զինքը հոգւով կը մանկացը
նեն : Արջապէս, կրօնքը իւր պարզ
հոգւովը ուսանող մը ըստ ամենայնի
հոգւով աներկիւղէ : Նորա համար
աշխարհի փառքն ու ճոխութիւնքը
ոչ ինչ արժէք չունին : Եթէ ձախոր-
դութեանց պատահի, կրօնի անհմուտ
մարդոյ նման չը յուսահատիր, սիրով
Յիսուսին կը փարի, իր օգնութիւնը
անկէ կը հայցէ, և որով 'ի վերջոյ կը
յաղթանակէ : Աորա համար նեղու-
թիւն կրելն ալ ուրախութիւն մ'է,
զիքաջ գիտէ, որ ամեն վիշտ և ամեն
տառապանք վերջ մը ունին, բայց ինքն
անմահ է : Տրտմութեան դառնակըս-
կիծ երգիծանքը միշտ 'ի բաց կը խու-
սէ անկէ : Այսպիսի չէ միայն :

Այրբ ընդհանրանայ իրապէս քրիս-
տոնէական կրօնի ճշմարիտ ուսումը,
ամեն ուրեք կը թագաւորէ սէրը,
ներողամտութեան հեզ և համբոյր
հոգին կը տիրապետէ, այլ եւս կը
դադրին ատելութեան և նախանձու
անթիւ կոտորածներն ու զոհերը, ո-
րով մարդկութիւնն համայն իբր ըն-
տանիք մը կամ գերդաստան մը սիրով
կը միանան, առանց ազգայնութեան
խտիր որոշելու, և այսպէսով մարդիկ
երջանիկ կեանք մը կ'ունենան, և ամեն
տեղ սպարտուց և իրաւանց անմահ
սկզբունքները փոխադարձ յարգել

կ'ուսանին մարդիկ : այլ եւս զրկելոյն
և հարստահարեալին ողբերն ու կո-
ծերը կը դադրին : Վասն զի անխիղճ
տիրապետները հալածանաց և հարս-
տահարութեան քաւազանը մէկ կողմ
գնելով իրենց թշուառ եղբարց մխի-
թարանաց և սիրոյ ձեռք պիտի տան
և երկուքը մէկ տեղ իբր մէկ Աստու-
ծոյ հաւատար արարած պիտի ըսեն՝
Աւետարանին հպատակենք և Յիսուս
թող իշխէ մեր վրայ :

Հարկ է գիտնալ նաեւ, որ մի և
նոյն մխիթարութիւնքը չունի Աւե-
տարանի անհմուտ քրիստոնեայն : Վա-
սնն զի այլ է 'ի սրտէ անոր փարիլը,
այլ է շրթամբ և եթ զայն համբու-
րելը : Այլ է հոգւով քրիստոնէու-
թիւնը : այլ է նաեւ անուանականը :
Կրօնի հմուտ քրիստոնեայն կը ճանչէ
իւր իսկական պարտաւորութիւնքը,
որ է հոգւով և ճշմարտութեամբ զԱ-
ստուած պաշտել, և 'ի գործ կը դնէ
անթերի : Բայց տգէտը շատ և շատ
անգամ արտաքինը ներքինոյն հետ կը
շփոթէ, իւր յոյսը արտաքինոյն հետ
կը կապէ, և իրեն առջեւ ելած նա-
խապաշարմունքը կուրորէն կը խնկար-
կէ, և մանաւանդ սրտի մեծ պաշտօ-
նը առ ոչ ինչ կը գրէ : Այսպիսեաց
վիճակը խիստ դառն է, եթէ փոր-
ձութեանց պատահի՝ վաղ ընդ փոյթ
իւր հաւատքին մէջ կը գթի, չունի
աչք հոգւոյ, որ տեսնէ իւր փրկու-
թիւնը, տեսնէ գՅիսուս, որ իր բա-
զուկները պարզած պատրաստ կայ
ողջագութելու իւր ճշմարիտ երկրպա-
դուն և հաւատացեալը : Ար տեսնէ
այս ամենը, և հետեւեալէս հեթանո-
սաց բաժին եղող յուսահատութեան
մէջ կը գլորի : Նման է նա Աւետարա-
նին ցուցած ապառաժին, որուն վը-
րայ թէպէտ և սերմը կը բուսնի, բայց
արեգակի տապէն չուտ կը չորանայ :

վասն զի չը կայ հոն՝ երկրի սննդարար
զօրութիւն : Այնպէս Աւետարանի
ճշմարտութեանց անհմուտը, թէպէտ
և կը լսէ կրօնի ձայնը, բայց ունկամբ
միայն և սրտով մեկուսիէ անկէ, ուս-
տի աշխարհի պատրանքները վաղ կը
հաօնին և կը խլեն զայն դեռ ևս ար-
մատ չը ձգած : Այնպէս չը կայ աշ-
խարհիս վրայ աւելի թշուառ մը քան
կրօնքին տգէտը, սրտով անմխիթար,
հոգւով անյայտ, մոգով աստանդական,
խղճով անհանգիստ : Ի դուր զինքը
չըմապատող առարկաներուն մէջ հո-
գեպարար հաճոյք մը կ'սրոնէ, բայց
իրեն համար ամեն բան տխուր է և
դառն, զի ինքը նիւթին ստրուկն է :

Կրօնի տգիտութենէն յառաջ է-
կած ցաւալի ճշմարտութիւն մը եւս
հոս խորստովանիլ պարտք կը համա-
րիմ, այսինքն ոմանց տգիտաց մոլե-
ռանդութիւնը, որոնք կը յարուցա-
նեն ազգ ազգի վրայ և թագաւորու-
թիւն ի թագաւորութե վրայ : Այս
ամենը ուրիշ բանի արդիւնք չեն, բայց
եթէ Աւետարանի պարզ և մեկին
ճշմարտութեանց անհմուտութենէն և
տգիտութենէն յառաջ եկած վիժ-
մունքներ : Ի՞նչ սոսկալի ամբարշտու-
թիւնք չեն գործադրուիր կրօնի տը-
գէտներուն, ձեռքով, սրճափ մար-
դիկ անյիշատակ թողուցեր են այս
կեանքը և որչափ մարդիկ անմխիթար
և անճաշակ Աւետարանի քաղցրու-
թիւններէն՝ դառն ու տխուր կեանք
մը կ'անցնեն :

Ասոր ներհակ որչափ երջանիկ պի-
տի ըլլան մարդիկ, երբ իրենց սրտէն
բնավինջ ընեն աշխարհասիրութեան,
իշխելու և հրամայելու մօլի և վատ
տենչը երբ իրենց եղբարց մէջ տար-
բեր աստիճաններ ստորնութիւն կամ
վերնութիւն նշմարելու յամառ կու-
րութիւնը ի բաց թողուն, երբ ի-

րենց յոյսը կրօնքին վրայ խարսխեն,
մխիթարութիւննին Աւետարանի մէջ
փնտռեն հոգւոյ աչքերնին նորա յա-
ւիտենական լուսով լուսաւորեն, և
սրտերնին նորա ճշմարտութեամբ պա-
րարեն : և ուսանին անկէ, որ իրենք
ստեղծուած չեն անասնոց նման ապ-
րելու և ստուերի նման անհետ անց-
նելու համար, այլ վսեմ և փառաւոր
վախճանի մը համար ստեղծուած են :
Եւ թէ Արարչին ամենասիրելի արա-
րածներն են, նորա զաւակները և ան-
մահ թագաւորութեան ժառանգ-
ները : Ասմբ կ'ուսուցանէ մեզ Աւե-
տարանը, և ասմբ են նորա մխիթա-
րութիւնները : Աւանց նորա և ա-
ռանց Աստուսին թշուառ են ընտա-
նիք, թշուառ՝ գերդաստանք, նոյնպէս
ազգութիւնք և թագաւորութիւնք :

Գ. Ս. Խապայեան
Խաբէրէի :

ԴՊՐՈՅԱԿԱՆ ԱՐԴԻԻՆՔ

Տարեմուտի առթիւ Ս. Աթոռոյս
ժառանգաւոր սանուկքը քանի մի
ճառեր կարդացին թէ՛ Պատրիարքա-
րանին մէջ, ուր համախմբուած էր հա-
մայն միաբանական Ուխտը և թէ՛ վար-
ժարանին մէջ, ուր յատկապէս այցե-
լութեան և քաջալերութեան եկած
էր Ամենապատիւ Սրբազան Պատրի-
արքը քանի մի բարեշնորհ միաբան
հարց հետ միասին խօսուած ճառե-
րէն մէկն է հետեւեալը :

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՍՐԲԱԶԱՆ
ՀԱՅՐ ԵՒ ՄԵԾԱՊԱՏԻՒ
ՀՍՆԴԻՍԱԿԱՆՔ

Ի՞նչ հրաշալի շարժում և ի՞նչ ա-
րագութիւն : Ար հոլովին ամբ, կը հա-
լովին դարբ և բաղմատեալ հետքեր

կը թողուն աշխարհիս վրայ : Մահ և կեանք , ձախորդութիւնք և յաջողութիւնք իրարու կը յաջորդեն և մարդկային ազգի սերնդոց արարմանց և ընթացից պատկերը կը ներկայացընեն : Դամանակը որ յաւիտենականութեան դաւակն է , իր ձեռքը կը կրէ մարդկային գործողութեանց մեծ շղթայն , որոյ իւրաքանչիւր օղակներն տարբեր տեսիլներով կը պատկերանան տիեզերական պատմութեան մէջ : Դամանակը գալարուն մագաղաթ մ' է , ուր ժիր և գործունի ազգերը իրենց սխրագործութիւնները կ'արձանագրեն օսկեղէն տառերով , իսկ ծոյլերը և վատերը իրենց անգործութեան սեւ գծերով միայն կը բծաւորեն զոյն :

Յաւիտենականութեան և ժամանակի Մարիչը նոր օրեր և նոր տարիներ կը պարգեւէ , պարտք դնելով աւմէն մարդու վրայ , որ գործէ քանի որ ժամանակ ունի : Նոյն սքանչելաշնորհ Մարիչը կը պարգեւէ մեզայսօր 1871 թուականը , զոր կը շնորհաւորեն մարգիկ զուարթ և բերկրալից դիմօք : Բայց կը զարմանամ հոս , թէ զի՞նչ է արդեօք այս հասարակային ուրախութիւնը , ի՞նչ է արդեօք ասոր շարժառիթը :

Սեր պարտքն է ուրախանալ եւ բերկրիլ այն ժամանակ , երբ մեր անձին և մեր եղբարց վրայ տեսնենք այն պարտուց կատարումը , որ յերկնից դուռած է մեր վրայ : Պարտիք ուրախտնալ ներկայ նորապարգեւ տարւոյն վրայ , բայց անցեալն ալ չը պիտի մոռնանք :

Ըրդ՝ ետ գարձունենք աչքերնիս և նկատենք իւրաքանչիւրնիս մեր կենաց միամեայ շրջանին մէջ գործածնիս և ըստ այնմ շարժիլք , նկատենք անգամ մը և աչքէ անցընենք : Վիւտենք մեր գործերը թէ արդեօք գոր-

ծած ենք այնպիսի գործեր , որով կարող ըլլամք տգէտ և դատարկաշրջիկ մարդիկները ամաչեցընել : Արդեօք գործած ենք այնպիսի գործեր , որոնք մեր ուրախութեան պատճառը հարցունողներուն ճշմարիտ և վճռական պատասխաններ կարողանան ըլլալ : Վնենք մեր սրտի խորերը , զննենք մեր ներքին մարդը , թէ արդեօք պահած ենք Աստուծոյ մեզ տուած անգին և մեծամեծ պատուէրները . սիրած ենք արդեօք մեր բարերարը , մեր նախապատճառը , մեր գերազայն բարութիւնը . ունեցած ենք արդեօք ջերմեռանդն սէր և քաղցր երկիւղածութիւն առ Աստախնամութիւնն , կատարած ենք արդեօք այն քաղցր և օգտակար յիշատակը և պարտաւորութիւնը , զոր պարտական էմք ունենալ առ մեր ընկերները , ստիպեալ մեր մեծ կոչման և նպատակի ճանաչողութենէն : Եթէ զուրկ ենք այս կատարելութիւններէն , ի՞նչու ուրեմն անպատշաճապէս կը խնդամք :

Ի՞նչ ողբալի վիճակ :

Փոխանակ ցաւելու մեր անգին կորստեանը վրայ , կը ցնծամք թէ կ'ուրախանամք , որ անմիտ երկրագործն է այն որ առանց երկիրը մշակելու և հետեւապէս առանց անկէց օգուտ մը քաղելու անհոգ կը նստի իր տանը մէջ և հնձողին ու ամբարողին հետ կը խնդայ : Ի՞նչ հանքապէս խօսելով , այն որ անհատն է , որ իր ձեռնարկութեան արդիւնքը չը տեսնայ և խնդայ : Վաջ պէտք է գիտնանք որ ժամանակը անխտիր է իր վարձատրութեանց մէջ , ճշմարտութեամբ և արդարութեամբ կը քննէ , կը գատէ , կը վճռէ և ըստ այնմ կը վարձատրէ :

Այն անհատները որոնք ժամանակի յարգը գիտնալով իր հետը ընթաւնալու ջանքը կ'ունենան և կամ ժա-


մանակի պահանջած պարտաւորութիւնները ճանչնալով ըստ այնմ կը գործեն, իրենց կեանքը կ'անմահացնեն : Դամանակը իր յարգը գիտցողին լոյս է, և խաւարը հալածելու համար անյաղթելի զօրավիգ : Դամանակը զինքը ըստ օրինի գործածել գիտցողը կը պսակէ գեղեցիկ և անկասկածաւոր պսակներով : Իսկ այն մարդիկ որոնք որ առանց ժամանակը յարգելու և առանց իր պահանջած կատարելութիւնները ճանաչելու դատարկաբար կը շրջին, այն ատեն ժամանակի ոգին արդարութեան և ճշմարտութեան գահուն վրայ բարձրացած անաչառապէս կը դատապարտէ այնպիսիները : Կ'աւրէ անգործներու աշխարհը, կը ջնջէ զօրաւոր կարծուած տէրութիւնները, և կը թողու միայն փոշի ՚ի վերայ փոշոյ : Կ'նաչառ ժամանակը կը մերկացնէ պղերգ հարուստն իր գոյքերէն, մեծաւորը իր մեծութենէն, փառաւորը իր փառքէն, պատուաւորը իր պատիւէն, իշխանաւորն իր իշխանութենէն, զօրաւորն իր զօրութենէն, վերջապէս թագաւորն ալ իր թագէն : Դամանակը ամենն ալ իր անգիմադրելի զօրութեամբն ընկճելով իր արագաշարժ անիւներուն տակ կը ճնշէ և կը փռ շիւղերէն : առ հասարակ մահ և սարսափ կը տարածէ ամենուն վրայ : քարի որ դատարկ են և չեն ճանչնար իրեն յարգը :

Սակայն և այնպէս, Սրբազան Հայր որդիական վստահութեամբ կը համարձակիմք ըսել որ, Ձեր գործքերը այնպէս կը ներկայանան մեզ որ անանց են և ժամանակի անմաշ մագաղսթին վրայ կ'արձանագրուին : Ձեր գործոց գլխաւորը՝ Ձեր ուսումնասիրական ջանքն է, և ահա այս իսկ է բոլոր ազգաց ալ հաստատուն բարօրութեան

հիմն և անգորդութիւն խարխիւն : Երբ ազգի մը մանկութիւնը զարգացած և մշակուած է, անշուշտ նոյն ազգի ապագայն բարեկեցիկ է, և անոր երջանկութիւնը տեւական : Ուրեմն իրաւունք ունիք այսօր ուրախանալու և յնծալու հանդերձ միաբանական սուրբ Ուխտիւ, որ աջակից և գործակից է Ձեզ՝ Ձեր ամէն ազգօգուտ ձեռնարկութեանց մէջ :

Սենք՝ ժառանգաւոր սանունքս, որ կը վայելէնք Ձեր խնամքը, վստահեղիք որ անջինջ կը դրոշմենք Ձեր երախտիքը, ոչ թէ քարեղէն կամ մարմնեղէն, այլ մեր անմոռացութեան հագեղէն տախտակներուն վրայ : Երբ սոյն նորամուտ տարիս բարեպատեհ առիթ ունենալով մեզ՝ քաղցր պարտք կը համարիմք հայցել Լստուծմէ, որ զօրացնէ Ձեր բազուկները, արիացնէ Ձեր աջակից Միաբանութիւնը որպէս զի քաջութեամբ և անգիմադրելի զօրութեամբ պատերազմիք խաւարի և տգիտութեան դէմ, որպէս զի ապագայ տարւոյն մէջ արժանաւորմբ Ձեր աւելի մեծամեծ սիրազոր ծութեանց արդիւնքը վայելէ :

1871 Յունիս 1 Ըստարշ-Յարո-Թիւն
Երոստէմ Յ. Եսայեանց Թաւաղի :
Աշ. Ժառ. Ուսում :



Ս. Լթոռոյս միաբան Գեր. Երեսէս ծայրագոյն վարդապետն, որ բարեշնորհ Սարգիս Լապ-Սարկաւազի հետ այցելութեան գնացած էր մեր հնդկաբնակ ազգայնոց, ամսոյս 2 ին Ս. Լթոռոս ժամանեց : Գիմաւորութեան և ընդունելութեան հանդէսը խիստ վայելուչ էր և սրտաշարժ : Լաւագ թարգմանը ետաղճիներով և միաբան հայրերէն ոմանք արդէն ընդ

առաջ դնացած էին Գեր. Այցելուն
 ժամ մի ճանապարհ քաղաքէն դուրս
 Նոր քաղաքի պարսպին մօտեցան, մեծ
 զանգակն սկսաւ հնչիլ, բոլոր միա
 բանք և ժառանգաւոր աշակերտք
 սրտորաստուեցան և կանգնեցան ըստ
 կարգի եկեղեցւոյ դաւթին մէջ: Հա
 սաւ Գեր. Այցելուն և հանդիսիւ ե
 կեղեցին մոտաւ, ուր իջաւ նմանա
 պէս Ամենապատիւ Սրբազան Պատրի
 առքն եւս: Եկեղեցւոյն մէջ գոհաբա
 նական երգեր և մաղթանքներ կար
 դացուելէն զինի՝ հանգիսաւոր կեր
 պիւ և երգոց հնչմամբ ելին ՚ի պատ
 ըխարքարան: Այս սրտաշարժ տեսա
 րանին հանգիսատես էին ամեն ուխ
 տաւորք և հայ քաղաքացիք, արք և
 կանայք: Պատրիարքարանին մէջ ՚ի դի
 մաց ժառանգաւոր աշակերտաց ճառ
 մի կարդաց Պօղոս Եփեսոսեան Չա
 նագ—Դաւեցի, համառօտ տաղաչա
 փութիւն մի արտասանեց Սկրտիչ
 Սարկաւազ Տիգրանակերտցի, ատեւ

նախօսութիւն մի ըրաւ Արժանա
 պատիւ Կիւրեղ վարդապետ Սրա
 պեան: Այս Գեր. Այցելուն սրտա
 շարժ ատեն նախօսութիւն սկսաւ պատ
 մել Ս. Աթոռոյս նախկին նուիրա
 կաց Հնդկաստանի ազգայնոց սրտին
 մէջ թողած քաղցր յիշատակները: Ըս
 կաւ համառօտիւ նկարագրել իւր
 այցելութեան ժամանակ զգացած տը
 պաւորութիւնները, և յետոյ գոհա
 նալով Աստուծոյ և բոլոր Սիբանու
 թենէն՝ կնքեց իւր ատենախօսութիւ
 նը Աւետարանի այս գեղեցիկ խօս
 քով. «Օառայ անպիտան էի, զոր
 ինչ պարտն էր առնել արարի» Այս
 ողբագուրեցան միաբան հարք և եղ
 բարք Գեր. Այցելուն և իւր ուղեկ
 ցին հետ, և այսպիսի սրտագրաւ կեր
 պիւ աւարտեցաւ հանդէսն:

Սկրտիչ Սարկաւազի արտասա
 նած համառօտ տաղաչափութիւնն է
 հետեւեալն:

Ը Ն Դ Դ Ա Ր Զ

ԳԵՐ. ՆԵՐՍԻՍԻ Ժ. ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՒ ՆՈՐԻՆ ՈՒՂԵԿԻՑ
 ՍԱՐԳՍԻ ՇՆՈՐՀՈՒՆԱԿ ԱՒԱԳԻ ՍԱՐԿԱՒԱԳԻ ԵԱՇԽԱՐՀԵՆ ՀՆԴԿԱՑ

Որ ՚ի սիրտ արիապինդ յեղբարց վառեալ անկեղծ ՚ի սէր,
 Յերկիր օտար սաւառնեալ ՚ի Գանգիսին օթէք յեղեր.
 Յերկիր, ուր Ձեզ վիշտք ելին ՚նդ առաջ բազմադիմիք,
 Յորոց կացիք ՚ի սպառնալեաց հուսկ ուրեմն անպարտելիք:

Փոխան բրտանց՝ զոր ուղխօրէն անդ հոսեցիք յօգուտ եղբարց,
 Ի Ձեր ճակատ անուշիտ յերկնուստ բոլորեցին պսակք փառաց.
 Փառաց պսակք՝ առաքինեացն ՚ի մահացուաց և եթ բաժին,
 Որք զանձինրս վասն եղբարց ՚ի մեծ վըտանգս յօժար եղին:
 Ոչ այսչափ, այլ Ձերդ բարեաց արժանաւոր մեծ յիշատակ,
 Կացցէ անջինջ ՚ի սիրտս որոց քաջիկ ծանեան զՁեր նպատակ.
 Քաղցր է նոցա և սերնդոց զնոյն աւանդել յաջորդաբար,
 Զանուանս ըզսիրալի Ձեր անմահ առնել դարուց ՚ի դար:

Օ՛ն ուրեմն, ո՛ նահատակք, տուք այժմ հանգիստ խոնջ անդամոցդ,
 Զվիշտ և զաղէտս ՚ի մոռացօնս փութանակի արկէք երկոցդ.
 Վայելեցէք արժանապէս ՚ի գիրկսն մօր սուրբ Սիօնի,
 Որ ցնծութեան ցօղէ զարտօսր ընդ Ձեր գալուստդ բերկրալի:

Ս. Սկրտիչ. Տիգրանակերտցի:

Ն Ա Խ Ն Ի

ՀՐԶԱՐԵՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ ԱՌԱՄԵՆԱՅՆ
ԵԿԵՂԵՑԻՍ

ՀԱՅՈՑ

ԱՐ ԸՆԴ ԻՇԽԱՆԹԵԱՄԲ ՕՍՄԱՆԵԱՆ
ՊԵՏՈՒԹԵԱՆ

Հայաստանեայ Ս : Եկեղեցւոյ
զուականները երկար ժամանակէն ՚ի
վեր կըստատէին Կ . Պօլսոյ Ամենապա-
տիւ Պատրիարքի շրջաբերական թղթ
թոյն : Հրաբերականը արդէն եկե-
ղեցեաց մէջ կարգացուած և տպագ-
րութեամբ հրատարակուած է , բայց
թէ ի՞նչ ազդեցութիւն և կամ ի՞նչ
տպաւորութիւն ունեցած է իւրա-
քանչիւր ունկնդրի կամ ընթերցողի
վրայ , չը գիտենք : Այնք միայն գի-
տենք և կը վկայենք , ինչ որ զգացած
ենք նոյն շրջաբերականի ընթերցմանէն :

Հրաբերականը գրուած է առա-
ւել սրտի լեզուով քան թէ մտքի .
վասն զի միտքը և սիրտը տարբեր լե-
զու ունին : Եռաջինը կը տրամաբանէ ,
իսկ երկրորդը կը ջերմացնէ : Պա-
քալ կըսէ թէ՛ ժողովրդի հետ խօ-
սողները միշտ ընտրած են սրտի լե-
զուով խօսիլ : Բայց սրտի լեզուն ալ
լաւ հասկնալու համար՝ սրտով կար-
գալ պէտք է : Այնք անտարակոյս ենք
որ ամեն սրտով կարգացողներ պիտի
զգան այն ամեն ճշմարտութիւնները ,
որոնք քրիստոնէական կրօնի սկզբունք-
ներէն առնուած և Հրաբերականի
մէջ ամփոփուած են համառօտիւ :
Պիտի զգան մարդկային պարտուց վե-
րաբերեալ գեղեցիկ յորդորները : Պի-
տի ճանաչեն ազգային վերականգա-
նութեան պատկանեալ անսուտ ա-
ռաջարկութիւնները : Պիտի զգան
վերջնապէս , այն յուսադրական քաջա-
լըրութիւնները և մխիթարական ըս-

փոխանքները , որով օծուած է Հրա-
բերական թուղթը :

Հրաբերականը այս խօսքերով կ'ա-
ւարտի : «Տնտեսութիւն սիրել , ար-
հեստներ ուսանիլ , ընկերութիւններ
կազմել , շահախաճառութեան հետե-
ւիլ , հայրենի հողը սիրել , նոյն հողին
վրայ քրտինք թափել , չարաչար պան-
դխտութեան չը դիմել , եկեղեցի սի-
րել , դպրոց սիրել , դատարարու-
թիւն սիրել և Աստուծոյ արքայու-
թիւնը խնդրել : Այս է քո փրկու-
թիւն և կեանք , ժողովուրդ Հայոց » :

Ի՞նչ կարող է յաւելուլ այս խօս-
քերուն վրայ զգայուն ընթերցողը ,
եթէ ոչ անհասկած կրկնել - ԱՅՈ՛ , ԱՅՈ՛ :

ԺԱՄԱՆԱԿԱՊԵՏԱՆԻ

- Այն երուսաղէմաբնակ ազգային-
ներէն Սեծ . Պ . Յակոբ Վեորգեան
երրորդ կարգի ասպետական պատ-
ւանշան ստացաւ Սպանիոյ Տէրու-
թենէն ՚ի վարձատրութիւն իւր հա-
ւատարիմ ծառայութեան , զոր ամօք
ինչ յառաջ ցուցած է տեղւոյս Սպա-
նիական Հիւպատոսարանի պաշտօնա-
վարութեան մէջ :

Այս մասին մեր խնդակցութիւնը
յայտնելով՝ կը փախադիմք միանգա-
մայն օր աւուր մեր Սեծ , բարեկա-
մին յառաջնայն տեսնել նաեւ Աւս-
տրիական Հիւպատոսարանի մէջ , որ
այժմ պաշտօն կը վարէ :

Տեղւոյս նախկին կառավարիչ Բեա-
միլ Փաշայն Փիլիպպէի՝ իսկ նախկին
Փիլիպպէի Կառավարիչ Ալի Փաշայն
Երուսաղէմի կառավարիչ անուանե-
ցան : Այնչեւ Ալի Փաշայի գալուս-
տը , որ մօտ օրերս կըստասուի , տեղ-
ւոյս կառավարչութիւնը ժամանակա-
ւոր կերպիւր յանձնուած է Պերութի
կառավարիչ Բաուֆ Փաշային :

ՅԵՆԿ

ՅՈՒՆՈՒԸՐ

Վերականգնութիւն .	1
Կաթողիկոսական խնդիր .	2
Սուրբ Տեղեաց խնդիր .	9
Լոյս և Օրգացում .	13
Վրիստոնէական կրօնի օգուտն և միութարութիւնք .	17
Վարդական արդիւնք . — Ճառ ի նոր տարի .	20
Պալատ Ներսէս Օ. վարդապետի . — Տաղաչափութիւն .	22—23
Շրջաբերական թուղթ .	24
Դամանակագրականք .	24

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Սիօնը ամէն ամիս կը հրատարակուի 24 երեսէ բաղկացեալ մէկուկէս ութածալ թղթով .
- Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մէճիտիյէ, հանդերձ ճանապարհի ծախքովը կանխիկ վճարելի .
- Գ. Զատ տեարակ առնել ուղղող, պէտք է ամեն մէկ տեարին չորս դա. հեկան վճարէ .